

**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ
ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՇՎԱՅԻՆ ՊԼԱՆ ԵՎ ԴՐԱ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՐԱՀԱՆԳ**

...

**III. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՇՎՆԵՐԻ
ԿԻՐԱՌՄԱՆ ՀՐԱՀԱՆԳ**

Հաշվապահական հաշվառման հաշիվների կիրառման հրահանգում նկարագրված են հաշվապահական հաշվառման վարման հետ կապված հիմնական մոտեցումները: Նրանում բերված են դասերի, հաշիվների խմբերի, առաջին կարգի (սինթետիկ) հաշիվների հակիրճ բնութագրերը, բացահայտված են վերջիններիս կառուցվածքը և նշանակությունը, առավել տարածված գործառնությունների տիպային (ոչ պարտադիր) հաշվապահական թղթակցությունները: Այն գործառնությունները, որոնց հաշվապահական թղթակցությունները սույն բաժնում նախատեսված չեն, կազմակերպությունները դրանց թղթակցությունները կազմում են ինքնուրույն՝ ելնելով ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներից և սույն հրահանգից: Հաշվապահական հաշվառման հաշիվների նկարագիրն ըստ բաժինների տրված է հաշվային պլանով նախատեսված հաջորդականությամբ:

...

ԴԱՍ 3 «ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ»

Այս դասի հաշիվները, բացառությամբ կարգավորող և ակտիվապասիվային հաշիվների, պասիվային են և նախատեսված են սեփական կապիտալի առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: 3 «Սեփական կապիտալ» դասն իր մեջ ներառում է հետևյալ խմբերը՝ 31 «Կանոնադրական կապիտալ և էմիսիոն եկամուտ», 32 «Վերագնահատումից և վերաչափումից տարբերություններ», 33 «Ֆինանսական արդյունք», 34 «Չբաշխված շահույթ (չձեռնարկված վնաս)» և 35 «Սեփական կապիտալի այլ հոդվածներ»:

ԽՈՒՄԲ 31 «ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ԷՄԻՍԻՈՆ ԵԿԱՄՈՒՏ»

31 «Կանոնադրական կապիտալ և էմիսիոն եկամուտ» խումբն իր մեջ ներառում է հետևյալ առաջին կարգի (սինթետիկ) հաշիվները՝ 311 «Կանոնադրական կապիտալ», 312 «Չվճարված կապիտալ», 313 «Հետ գնված կապիտալ» և 314 «Էմիսիոն եկամուտ»:

Հաշիվ 311 «Կանոնադրական կապիտալ»

311 «Կանոնադրական կապիտալ» հաշիվը նախատեսված է կազմակերպության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Կանոնադրական կապիտալի ձևավորման կարգը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և կազմակերպության հիմնադիր փաստաթղթերով:

Հաշիվը պասիվային է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում են կազմակերպության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալը և դրա հետագա ավելացումները, իսկ դեբետում՝ նվազեցումները: Այս

հաշվի մնացորդը կրեդիտային է և իրենից ներկայացնում է կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի մեծությունը հաշվետու ամսաթվի դրությամբ:

311 «Կանոնադրական կապիտալ» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 3111 «Հասարակ բաժնետոմսեր», 3112 «Արտոնյալ բաժնետոմսեր», 3113 «Բաժնեմասեր», 3114 «Փայեր»:

Կանոնադրական կապիտալի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ մասնակիցների (բաժնետերերի) և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

311 «Կանոնադրական կապիտալ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի ձևավորում՝	
ա) դրամական միջոցներով	251 «Դրամարկղ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժութային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում»
բ) այլ ակտիվներով	111 «Մաշվող հիմնական միջոցներ» 115 «Հողամասեր» 116 «Կենսաբանական ակտիվներ» 118 «Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ» 122 «Ներդրումային գույք» 131 «Ոչ նյութական ակտիվներ» 141 «Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ չկապակցված կազմակերպություններում» 142 «Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ կապակցված կազմակերպությունների կանոնադրական կապիտալում» 143 «Իրական արժեքով չափվող ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 144 «Մինչև մարման ժամկետը պահվող երկարաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքեր» 211 «Նյութեր» 212 «Սառավող կենսաբանական ակտիվներ» 216 «Ապրանքներ» 231 «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 232 «Վաճառքի համար մատչելի ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 233 «Մինչև մարման ժամկետը պահվող կարճաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքեր»
2. Կանոնադրական կապիտալի հետագա ավելացում՝	
ա) երբ ավելացման (տեղաբաշխման) և ներդրման (վճարման) պահերը չեն համընկնում	312 «Զվճարված կապիտալ»
բ) երբ ավելացման (տեղաբաշխման) և ներդրման (վճարման) պահերը համընկնում են՝	
- դրամական միջոցներով	251 «Դրամարկղ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժութային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում»

<p>- այլ ակտիվներով կամ պարտավորությունների մարմամբ</p>	<p>111 «Մաշվող հիմնական միջոցներ» 115 «Հողամասեր» 116 «Կենսաբանական ակտիվներ» 118 «Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ» 122 «Ներդրումային գույք» 131 «Ոչ նյութական ակտիվներ» 141 «Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ չկապակցված կազմակերպություններում» 142 «Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ կապակցված կազմակերպությունների կանոնադրական կապիտալում» 143 «Իրական արժեքով չափվող ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 144 «Մինչև մարման ժամկետը պահվող երկարաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքեր» 211 «Նյութեր» 212 «Սպառվող կենսաբանական ակտիվներ» 216 «Ապրանքներ» 231 «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 232 «Վաճառքի համար մատչելի ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 233 «Մինչև մարման ժամկետը պահվող կարճաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքեր» 411 «Երկարաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարներ» 412 «Երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարներ» 511 «Կարճաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարներ» 512 «Երկարաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս» 513 «Կարճաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարներ» 514 «Երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս» 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով» 529 «Պարտքեր շահաբաժինների գծով»</p>
<p>3. Կանոնադրական կապիտալի ավելացում փոխարկելի պարտավորությունների (պարտատոմսեր, արտոնյալ բաժնետոմսեր և այլն) փոխարկմամբ</p>	<p>412 «Երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարներ» 513 «Կարճաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարներ» 514 «Երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս»</p>
<p>4. Կանոնադրական կապիտալի ավելացում սեփական կապիտալի այլ տարրերի հաշվին</p>	<p>314 «Էմիսիոն եկամուտ» 342 «Նախորդ տարիների չբաշխված շահույթ (չծածկված վնաս)»</p>
<p>5. Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքների իրագործում</p>	<p>352 «Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքներ»</p>

311 «Կանոնադրական կապիտալ» հաշիվը դերբերով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
Կանոնադրական կապիտալի նվազեցում՝	

ա) հետ գնված և շրջանառությունից հանված (մարված) բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) հաշվին՝	
- հետգնման գնով, երբ հետգնման գինը փոքր է անվանական արժեքից	313 «Հետ գնված կապիտալ»
- հետգնման գնի և անվանական արժեքի բացասական տարբերության չափով	314 «Էմիսիոն եկամուտ»
բ) թողարկված, բայց չտեղաբաշխված բաժնետոմսերի հաշվին	312 «Չվճարված կապիտալ»
գ) նախորդ տարիների վնասի ծածկման նպատակով	342 «Նախորդ տարիների չբաշխված շահույթ (չծածկված վնաս)»

Հաշիվ 312 «Չվճարված կապիտալ»

312 «Չվճարված կապիտալ» հաշիվը նախատեսված է կազմակերպության չվճարված կապիտալի առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվն ակտիվային է, կարգավորող: Մասնավորապես, դեբետում արտացոլվում է մասնակիցների (բաժնետերերի) պարտքը կազմակերպության կապիտալում ներդրումների գծով, ինչպես նաև բաժնետիրական ընկերությունների թողարկած, բայց չտեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքը, իսկ կրեդիտում՝ այդ պարտքի մարումը, չմարված պարտքերի կամ թողարկված, բայց չտեղաբաշխված բաժնետոմսերի հաշվին կապիտալի նվազեցումը: Այս հաշվի մնացորդը դեբետային է և իրենից ներկայացնում է հաշվետու ամսաթվի դրությամբ մասնակիցների (բաժնետերերի) պարտքը կազմակերպության կապիտալում ներդրումների գծով և տեղաբաշխված, բայց չվճարված բաժնետոմսերի անվանական արժեքը: Այն դասի ընդհանուր գումարում ներառվում է բացասական նշանով:

312 «Չվճարված կապիտալ» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 3121 «Թողարկված և չտեղաբաշխված կապիտալ», 3122 «Տեղաբաշխված և չվճարված կապիտալ՝ մինչև անվանական արժեքի չափով», 3123 «Տեղաբաշխված և չվճարված կապիտալ՝ անվանական արժեքը գերազանցող չափով»:

Չվճարված կապիտալի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ մասնակիցների (բաժնետերերի) և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

312 «Չվճարված կապիտալ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Բաժնետիրական ընկերությունների կողմից թողարկված, բայց չտեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքի, ինչպես նաև տեղաբաշխված (բայց ամբողջովին կամ մասամբ չվճարված) բաժնետոմսերի անվանական արժեքի և դրանց դիմաց վճարված գումարի տարբերության արտացոլում	311 «Կանոնադրական կապիտալ»
2. Հետ գնված(ծեռք բերված) բաժնետոմսերի վերավաճառք, երբ վաճառքի և վճարման պահերը չեն համընկնում	313 «Հետ գնված կապիտալ»

3. Տեղաբաշխված, բայց չվճարված բաժնետոմսերի վաճառքի գնի և անվանական արժեքի դրական տարբերության արտացոլում	314 «Էմիսիոն եկամուտ»
4. Հետ գնված (ծեռք բերված) բաժնետոմսերի վերավաճառքի գնի և հետգնման գնի դրական տարբերության արտացոլում	314 «Էմիսիոն եկամուտ»

312 «Չվճարված կապիտալ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետք

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Կապիտալում ներդրումների գծով մասնակիցների (բաժնետերերի) պարտքերի մարում	
ա) դրամական միջոցներով	251 «Դրամարկղ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում»
բ) այլ ակտիվներով կամ պարտավորությունների մարմանը	111 «Մաշվող հիմնական միջոցներ» 115 «Հողամասեր» 116 «Կենսաբանական ակտիվներ» 118 «Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ» 122 «Ներդրումային գույք» 131 «Ոչ նյութական ակտիվներ» 141 «Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ չկապակցված կազմակերպություններում» 142 «Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ կապակցված կազմակերպությունների կանոնադրական կապիտալում» 143 «Իրական արժեքով չափվող ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 144 «Մինչև մարման ժամկետը պահվող երկարաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքեր» 211 «Նյութեր» 212 «Սպառվող կենսաբանական ակտիվներ» 216 «Ապրանքներ» 231 «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 232 «Վաճառքի համար մատչելի ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 233 «Մինչև մարման ժամկետը պահվող կարճաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքեր» 411 «Երկարաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարներ» 412 «Երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարներ» 511 «Կարճաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարներ» 512 «Երկարաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս» 513 «Կարճաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարներ» 514 «Երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս» 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով»

	529 «Պարտքեր շահաբաժինների գծով»
2. Կանոնադրական կապիտալի նվազեցում թողարկված, բայց չտեղաբաշխված կամ չվճարված բաժնետոմսերի հաշվին	311 «Կանոնադրական կապիտալ»

Հաշիվ 313 «Հետ գնված կապիտալ»

313 «Հետ գնված կապիտալ» հաշիվը նախատեսված է մասնակիցներից (բաժնետերերից) հետ գնված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվն ակտիվային է, կարգավորող: Մասնավորապես, դեբետում արտացոլվում է մասնակիցներից (բաժնետերերից) հետ գնված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) արժեքը, իսկ կրեդիտում՝ դրանց մարումը և վերավաճառքը: Հաշվի մնացորդը դեբետային է և իրենից ներկայացնում է հետ գնված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) արժեքը հաշվետու ամսաթվի դրությամբ: Այն դասի ընդհանուր գումարում ներառվում է բացասական նշանով:

313 «Հետ գնված կապիտալ» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 3131 «Հետ գնված հասարակ բաժնետոմսեր՝ անվանական արժեքով», 3132 «Հետ գնված հասարակ բաժնետոմսեր՝ անվանական արժեքի և հետգնման գնի տարբերության չափով», 3133 «Հետ գնված արտոնյալ բաժնետոմսեր՝ անվանական արժեքով», 3134 «Հետ գնված արտոնյալ բաժնետոմսեր՝ անվանական արժեքի և հետգնման գնի տարբերության չափով», 3135 «Հետ գնված բաժնեմասեր՝ անվանական արժեքով», 3136 «Հետ գնված բաժնեմասեր՝ անվանական արժեքի և հետգնման գնի տարբերության չափով», 3137 «Հետ գնված փայեր՝ անվանական արժեքով», 3138 «Հետ գնված փայեր՝ անվանական արժեքի և հետգնման գնի տարբերության չափով»:

Հետ գնված կապիտալի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ կազմակերպության կողմից հաստատված ուղղությունների:

313 «Հետ գնված կապիտալ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
Հետ գնված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) արտացոլում՝ գնման գնով	251 «Դրամարկղ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 531 «Այլ ընթացիկ պարտավորություններ»

313 «Հետ գնված կապիտալ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Շրջանառությունից հանված և մարված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) արտացոլում՝	
- մինչև անվանական արժեքը	311 «Կանոնադրական կապիտալ»
- անվանական արժեքը գերազանցող մասը	314 «Էմիսիոն եկամուտ»

2. Հետ գնված բաժնետոմսերի վաճառք, երբ վաճառքի և վճարման պահերը համընկնում են՝	
ա) երբ վաճառքի գինը բարձր է հետգնման գնից՝ հետգնման գնով	251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում»
բ) երբ վաճառքի գինը ցածր է հետգնման գնից՝	
- վաճառքի գնով	251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում»
- վաճառքի գնի և հետգնման գնի բացասական տարբերության չափով	314 «Էմիսիոն եկամուտ»
3. Հետ գնված բաժնետոմսերի վաճառք, երբ վաճառքի և վճարման պահերը չեն համընկնում՝	
ա) երբ վաճառքի գինը բարձր է հետգնման գնից՝ հետգնման գնով	312 «Չվճարված կապիտալ»
բ) երբ վաճառքի գինը ցածր է հետգնման գնից՝	
- վաճառքի գնով	312 «Չվճարված կապիտալ»
- վաճառքի գնի և հետգնման գնի բացասական տարբերության չափով	314 «Էմիսիոն եկամուտ»

Հաշիվ 314 «Էմիսիոն եկամուտ»

314 «Էմիսիոն եկամուտ» հաշիվը նախատեսված է կազմակերպության էմիսիոն եկամտի առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվը պասիվային է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում է տեղաբաշխված բաժնետոմսերի վաճառքի գնի և անվանական արժեքի դրական տարբերությունը, իսկ դեբետում՝ բացասական տարբերությունը: Հաշվի մնացորդը կրեդիտային է: Դեբետային մնացորդի առաջացման դեպքում այն դասի ընդհանուր գումարում ներառվում է բացասական նշանով:

Էմիսիոն եկամտի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ կազմակերպության կողմից հաստատված ուղղությունների:

314 «Էմիսիոն եկամուտ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Տեղաբաշխված բաժնետոմսերի վաճառքի գնի և անվանական արժեքի դրական տարբերության արտացոլում՝	
ա) երբ տեղաբաշխման և վճարման պահերը համընկնում են	251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում»
բ) երբ տեղաբաշխման և վճարման պահերը չեն համընկնում	312 «Չվճարված կապիտալ»

2. Հետզնված (ծեռք բերված) բաժնետոմսերի վերավաճառքի գնի և հետզնման գնի դրական տարբերության արտացոլում	
ա) երբ վերավաճառքի և վճարման պահերը համընկնում են	251 «Դրամարկո» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում»
բ) երբ վերավաճառքի և վճարման պահերը չեն համընկնում	312 «Չվճարված կապիտալ»
3. Հետ գնված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) շրջանառությունից հանմամբ (մարմամբ) կանոնադրական կապիտալի նվազեցում՝ անվանական արժեքի և հետզնման գնի դրական տարբերության չափով	311 «Կանոնադրական կապիտալ»

314 «Էմիսիոն եկամուտ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Վաճառված բաժնետոմսերի վերավաճառքի գնի և հետզնման գնի բացասական տարբերության արտացոլում	313 «Հետ գնված կապիտալ»
2. Հետ գնված և շրջանառությունից հանված ու մարված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) անվանական արժեքը գերազանցող մասով էմիսիոն եկամտի նվազեցում	313 «Հետ գնված կապիտալ»
3. Կանոնադրական կապիտալի ավելացում էմիսիոն եկամտի հաշվին	311 «Կանոնադրական կապիտալ»

ԽՈՒՄԲ 32 «ՎԵՐԱԳՆԱՀԱՏՈՒՄԻՑ ԵՎ ՎԵՐԱԶՎՓՈՒՄԻՑ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

32 «Վերագնահատումից և վերաչափումից տարբերություններ» խումբն իր մեջ ներառում է հետևյալ առաջին կարգի (սինթետիկ) հաշիվները՝ 321 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճ», 322 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտներ և կորուստներ» և 323 «Եջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտներ և կորուստներ», 324 «Փոխարժեքային տարբերություններ՝ կապված արտերկրյա ստորաբաժանումների հետ», 325 «Որպես վաճառքի համար պահվող դասակարգված ակտիվներին վերաբերող չիրացված օգուտներ կամ կորուստներ»:

Հաշիվ 321 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճ»

321 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճ» հաշիվը նախատեսված է հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար, որը կիրառվում է, երբ կազմակերպությունն ընտրել է հիմնական միջոցները և ոչ նյութական ակտիվները վերագնահատված արժեքով հաշվառելու քաղաքականություն: Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճի հաշվապահական հաշվառման մեջ արտացոլման մոտեցումները նկարագրված են «Հիմնական միջոցներ» ՀՀՄՍ 16-ում և «Ոչ նյութական ակտիվներ» ՀՀՄՍ 38-ում:

Հաշիվը պասիվային է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում է հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից կամ արժեզրկման հակադարձումից զուտ օգուտի տեղափոխումը այլ համապարփակ ֆինանսական արդյունքից, իսկ դեբետում՝ վերագնահատումից կամ արժեզրկումից զուտ կորստի տեղափոխումը այլ համապարփակ ֆինանսական արդյունքից, ինչպես նաև զուտ օգուտի վերագրումը

չբաշխված շահույթին: Այս հաշվի մնացորդը կրեդիտային է և իրենից ներկայացնում է հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճի գումարը հաշվետու ամսաթվի դրությամբ:

321 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճ» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 3211 «Հիմնական միջոցների վերագնահատումից արժեքի աճ», 3212 «Ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճ»:

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ կազմակերպության կողմից հաստատված ուղղությունների:

321 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից չիրացված զուտ օգուտի (հարկային հետևանքներն հաշվի առած) տեղափոխումը այլ համապարփակ ֆինանսական արդյունքից	671 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից օգուտներ»

321 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Հիմնական միջոցներին և ոչ նյութական ակտիվների վերաչափումից չիրացված զուտ կորստի (հարկային հետևանքներն հաշվի առած) տեղափոխումը այլ համապարփակ ֆինանսական արդյունքից	771 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից կորուստներ»
2. Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների մաշվածությանը (ամորտիզացիային) զուգընթաց, ինչպես նաև օտարվող ակտիվներին վերաբերող՝ վերագնահատումից արժեքի աճի վերագրումը չբաշխված շահույթին	342 «Նախորդ տարիների չբաշխված շահույթ (չծածկված վնաս)

Հաշիվ 322 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտներ և կորուստներ»

322 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտներ և կորուստներ» հաշիվը նախատեսված է վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտների և կորուստների (բացի հեջի հաշվառման նպատակներով իրական արժեքի հեջի դեպքում որպես հեջավորված հոդված նախատեսված վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվի՝ հեջավորված ռիսկին վերագրելի օգուտի կամ կորստից) վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտների և կորուստների հաշվապահական հաշվառման մեջ արտացոլման մոտեցումները (ճանաչումը այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, կուտակումը սեփական կապիտալում և վերադասակարգումը շահույթում կամ վնասում) նկարագրված են «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՍ 39-ում:

Հաշիվն ակտիվապասիվային է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում է վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտները, չիրացված կորուստների վերադասակարգումը շահույթում կամ վնասում, իսկ դեբետում՝ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված կորուստները, չիրացված օգուտների վերադասակարգումը շահույթում կամ վնասում: Այս հաշվի կրեդիտային մնացորդն իրենից ներկայացնում է

հաշվետու ամսաթվի դրությամբ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտները, իսկ դեբետային մնացորդը՝ չիրացված կորուստները: Դեբետային մնացորդի դեպքում այն դասի ընդհանուր գումարում ներառվում է բացասական նշանով:

322 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտներ և կորուստներ» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 3221 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտներ», 3222 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված կորուստներ»:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտների և կորուստների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ կազմակերպության կողմից հաստատված ուղղությունների:

322 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտներ և կորուստներ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտների արտացոլում	672 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից օգուտներ»
2. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից կորուստների ճանաչումը շահույթում կամ վնասում՝ որպես վերադասակարգման ճշգրտում	742 «Վերադասակարգման ճշգրտումներ. վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքով վերաչափումից իրացված կորուստներ»

322 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտներ և կորուստներ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված կորուստների արտացոլում	772 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից կորուստներ»
2. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից օգուտների ճանաչումը շահույթում կամ վնասում՝ որպես վերադասակարգման ճշգրտում	642 «Վերադասակարգման ճշգրտումներ. վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքով վերաչափումից իրացված օգուտներ»

Հաշիվ 323 «Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտներ և կորուստներ»

323 «Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտներ և կորուստներ» հաշիվը նախատեսված է դրամական հոսքերի հեջի ժամանակ որպես հեջավորման գործիք նախատեսված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների՝ որպես արդյունավետ հեջ որոշված մասի գծով իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտների և կորուստների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Որպես հեջավորման գործիք նախատեսված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտների և կորուստների հաշվապահական հաշվառման մեջ արտացոլման մոտեցումները (ճանաչումը այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, կուտակումը

սեփական կապիտալում, ներառումը հեջավորված կանխատեսված գործարքի արդյունքում ճանաչված ոչ ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական արժեքում, ինչպես նաև վերադասակարգումը շահույթում կամ վնասում) նկարագրված են «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՍ 39-ում:

Հաշիվն ակտիվապասիվային է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում է որպես հեջավորման գործիք նախատեսված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների՝ որպես արդյունավետ հեջ որոշված մասի գծով իրական արժեքով վերաչափումից չիրացված զուտ (հաշվի առած հարկայի հետևանքները) օգուտները, չիրացված զուտ կորուստների վերադասակարգումը շահույթում կամ վնասում և դրանց ներառումը ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական արժեքում, եթե հեջավորված կանխատեսված գործարքը հանգեցնում է ոչ ֆինանսական ակտիվի կամ ոչ ֆինանսական պարտավորության ճանաչմանը, իսկ դեբետում՝ որպես հեջավորման գործիք նախատեսված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված կորուստները, չիրացված օգուտների վերագրումը ֆինանսական արդյունքներին և դրանց ներառումը ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական արժեքում, եթե հեջավորված կանխատեսված գործարքը հանգեցնում է ոչ ֆինանսական ակտիվի կամ ոչ ֆինանսական պարտավորության ճանաչմանը: Այս հաշվի կրեդիտային մնացորդը իրենից ներկայացնում է հաշվետու ամսաթվի դրությամբ որպես հեջավորման գործիք նախատեսված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտները, իսկ դեբետային մնացորդը՝ չիրացված կորուստները: Դեբետային մնացորդի դեպքում այն դասի ընդհանուր գումարում ներառվում է բացասական նշանով:

323 «Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտներ և կորուստներ» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 3231 «Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտներ», 3232 «Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված կորուստներ»:

Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտների և կորուստների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ հեջերի և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

323 «Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտներ և կորուստներ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտների արտացոլում	673 «Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից օգուտներ»
2. Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից կորուստների ճանաչումը շահույթում կամ վնասում՝ որպես վերադասակարգման ճշգրտում	743 «Վերադասակարգման ճշգրտումներ. հեջավորման գործիքների իրական արժեքով վերաչափումից իրացված կորուստներ»
3. Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված կորուստների ներառումը ակտիվների և պարտավորությունների սկզբնական արժեքում (երբ կանխատեսված գործարքի հեջը հանգեցնում է ոչ ֆինանսական ակտիվի կամ ոչ ֆինանսական պարտավորության ճանաչման և երբ կազմակերպությունն ընտրում օգուտներն ու կորուստները ակտիվի կամ պարտավորության հաշվեկշռային արժեքում ներառելու քաղաքականությունը համաձայն ՀՀՄՍ 39.98(բ)-ի)	Թղթակցում է ոչ ֆինանսական ակտիվները և ոչ ֆինանսական պարտավորությունները հաշվառող համապատասխան հաշիվների հետ

**323 «Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտներ և կորուստներ»
հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ**

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված կորուստների արտացոլում	773 «Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից կորուստներ»
2. Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտների ճանաչումը շահույթում կամ վնասում՝ որպես վերադասակարգման ճշգրտում	643 «Վերադասակարգման ճշգրտումներ. հեջավորման գործիքների իրական արժեքով վերաչափումից իրացված օգուտներ»
3. Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտների ներառումը ակտիվների և պարտավորությունների սկզբնական արժեքում (երբ կանխատեսված գործարքի հեջը հանգեցնում է ոչ ֆինանսական ակտիվի կամ ոչ ֆինանսական պարտավորության ճանաչման և երբ կազմակերպություն ընտրում օգուտներն ու կորուստները ակտիվի կամ պարտավորության հաշվեկշռային արժեքում ներառելու քաղաքականությունը համաձայն ՀՀՄՍ 39.98(բ)-ի)	Թղթակցում է ոչ ֆինանսական ակտիվները և ոչ ֆինանսական պարտավորությունները հաշվառող համապատասխան հաշիվների հետ

Հաշիվ 324 «Փոխարժեքային տարբերություններ՝ կապված արտերկրյա ստորաբաժանումների հետ»

324 «Փոխարժեքային տարբերություններ՝ կապված արտերկրյա ստորաբաժանումների հետ» հաշիվը նախատեսված է արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային տարբերությունների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային տարբերությունները (փոխարժեքային օգուտները և կորուստները) ներառում են արտերկրյա ստորաբաժանումների ֆինանսական հաշվետվությունների վերահաշվարկումից առաջացող փոխարժեքային տարբերությունները և արտերկրյա ստորաբաժանումներում զուտ ներդրման հեջում հեջավորման գործիքի գծով փոխարժեքային տարբերությունները (այնքանով, որքանով հեջը գնահատվում է որպես արդյունավետ): Այդպիսի փոխարժեքային տարբերություններ կարող են առաջանալ, երբ արտերկրյա ստորաբաժանման (մասնաճյուղի) ֆունկցիոնալ արժույթը տարբեր է հաշվետու կազմակերպության ֆունկցիոնալ արժույթից: Արտերկրյա ստորաբաժանումների հետ փոխարժեքային տարբերությունների հաշվապահական հաշվառման մեջ արտացոլման մոտեցումները (ճանաչումը այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, կուտակումը սեփական կապիտալում և վերադասակարգումը շահույթում կամ վնասում) նկարագրված են «Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքները» ՀՀՄՍ 21-ում և «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՍ 39-ում:

Հաշիվն ակտիվապասիվային է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում է արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային չիրացված օգուտները, չիրացված կորուստների վերադասակարգումը շահույթում կամ վնասում, իսկ դեբետում՝ արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային չիրացված կորուստները, չիրացված օգուտների վերադասակարգումը շահույթում կամ վնասում: Այս հաշվի կրեդիտային մնացորդն իրենից ներկայացնում է հաշվետու ամսաթվի դրությամբ արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային չիրացված օգուտները, իսկ դեբետային մնացորդը՝ չիրացված կորուստները: Դեբետային մնացորդի դեպքում այն դասի ընդհանուր գումարում ներառվում է բացասական նշանով:

324 «Փոխարժեքային տարբերություններ՝ կապված արտերկրյա ստորաբաժանումների հետ» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 3241 «Փոխարժեքային տարբերություններ՝ արտերկրյա ստորաբաժանումների ֆինանսական հաշվետվությունների վերահաշվարկումից», 3242

«Փոխարժեքային տարբերություններ՝ արտերկրյա ստորաբաժանումներում զուտ ներդրման մաս համարվող դրամային հոդվածների գծով», 3243 «Փոխարժեքային տարբերություններ՝ արտերկրյա ստորաբաժանումներում զուտ ներդրման հեջերի գծով»:

Արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային տարբերությունների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ կազմակերպության կողմից հաստատված ուղղությունների:

324 «Փոխարժեքային տարբերություններ՝ կապված արտերկրյա ստորաբաժանումների հետ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային չիրացված օգուտների արտացոլում	674 «Արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային օգուտներ»
2. Արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային կորուստների ճանաչումը շահույթում կամ վնասում՝ որպես վերադասակարգման ճշգրտում (արտերկրյա ստորաբաժանման օտարման ժամանակ)	744 «Վերադասակարգման ճշգրտումներ. արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային տարբերություններից իրացված կորուստներ»

324 «Փոխարժեքային տարբերություններ՝ կապված արտերկրյա ստորաբաժանումների հետ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային չիրացված կորուստների արտացոլում	774 «Արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային կորուստներ»
2. Արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային օգուտների ճանաչումը շահույթում կամ վնասում՝ որպես վերադասակարգման ճշգրտում (արտերկրյա ստորաբաժանման օտարման ժամանակ)	644 «Վերադասակարգման ճշգրտումներ. արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային տարբերություններից իրացված օգուտներ»

ԽՈՒՄԲ 33 «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ»

33 «Ֆինանսական արդյունք» խումբն իր մեջ ներառում է 331 «Շահույթ կամ վնաս» հաշիվը:

Հաշիվ 331 «Շահույթ կամ վնաս»

331 «Շահույթ կամ վնաս» հաշիվը նախատեսված է կազմակերպության հաշվետու տարվա գործունեության շահույթի կամ վնասի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Շահույթը կամ վնասը ներառում է տվյալ ժամանակաշրջանում ճանաչված բոլոր եկամուտներն ու ծախսերը (ներառյալ՝ օգուտներն ու կորուստները), բացառությամբ, երբ դրանք ՖՀՄՍ-ներին և կազմակերպության հաշվապահական հաշվառման քաղաքականությանը համապատասխան ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

Հաշվի կրեդիտում արտացոլվում են կազմակերպության գործունեության եկամուտները, ինչպես նաև զուտ վնասի դուրս գրումը, իսկ դեբետում՝ ծախսերը և զուտ շահույթի դուրս գրումը: Այս հաշիվը տարեվերջի մնացորդ չի ունենում: Հաշվետու տարվա զուտ արդյունքը տեղափոխվում է 343 «Հաշվետու տարվա զուտ շահույթ (վնաս)» հաշվին:

331 «Շահույթ կամ վնաս» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 3311 «Շարունակվող գործունեությունից շահույթ կամ վնաս», 3312 «Ընդհատված գործունեությունից շահույթ կամ վնաս»:

331 «Շահույթ կամ վնաս» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կուտակված եկամուտների արտացոլում	611 «Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ» 614 «Գործառնական այլ եկամուտներ» 615 «Գյուղատնտեսական գործունեությունից եկամուտ» 621 «Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից եկամուտներ» 622 «Ընթացիկ ֆինանսական ակտիվների օտարումից եկամուտներ» 624 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից օգուտներ» 625 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտներ» 626 «Ոչ գործառնական ֆինանսական գործիքների վերաչափումից և արժեզրկման (անհավաքագրելիության) հակադարձումից օգուտներ» 627 «Ֆինանսական ներդրումներից եկամուտներ» 628 «Շնորհներից և անհատուց ստացումներից եկամուտներ» 629 «Այլ եկամուտներ» 631 «Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ՝ ընդհատված գործունեությունից» 632 «Ընդհատված գործունեությունը կազմող ակտիվների կամ օտարման խմբերի օտարումից և (կամ) վերաչափումից եկամուտներ»
2. Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ վերադասակարգման ճշգրտումներից օգուտների արտացոլում	642 «Վերադասակարգման ճշգրտումներ. վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքով վերաչափումից իրացված օգուտներ» 643 «Վերադասակարգման ճշգրտումներ. հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից իրացված օգուտներ» 644 «Վերադասակարգման ճշգրտումներ. արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային տարբերություններից իրացված օգուտներ»
3. Շահութահարկի գծով եկամտի արտացոլում (երբ հաշվետու ժամանակաշրջանում շարունակվող կամ ընդհատված գործունեության արդյունքներով առաջացել է հարկի գծով եկամուտ)	733 «Շահութահարկ ընդհատված գործունեության» 751 «Շահութահարկի գծով ծախս (եկամուտ)»
4. Հաշվետու ժամանակաշրջանի զուտ վնասի տեղափոխում	343 «Հաշվետու տարվա զուտ շահույթ (վնաս)»

331 «Շահույթ կամ վնաս» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Հաշվետու տարվա վերջի դրությամբ կուտակված ծախսերի հավաքագրում ըստ կազմակերպության գործունեության տեսակների	711 «Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք» 712 «Իրացման ծախսեր» 713 «Վարչական ծախսեր» 714 «Գործառնական այլ ծախսեր» 715 «Գյուղատնտեսական գործունեությունից ծախսեր»

	<p>721 «Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից ծախսեր»</p> <p>722 «Ընթացիկ ֆինանսական ակտիվների օտարումից ծախսեր»</p> <p>724 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից կորուստներ»</p> <p>725 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից կորուստներ»</p> <p>726 «Ոչ գործառնական ֆինանսական գործիքների վերաչափումից և արժեզրկումից (անհավաքագրելիությունից) կորուստներ»</p> <p>727 «Ֆինանսական ծախսեր»</p> <p>728 «Անհատույց տրված ակտիվների գծով ծախսեր»</p> <p>729 «Այլ ծախսեր»</p> <p>731 «Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք՝ ընդհատված գործունեությունից»</p> <p>732 «Ընդհատված գործունեությունը կազմող ակտիվների կամ օտարման խմբերի օտարումից և (կամ) վերաչափումից ծախսեր»</p> <p>733 «Շահութահարկ ընդհատված գործունեության»</p> <p>751 «Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)»</p>
<p>2. Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ վերադասակարգման ճշգրտումներից կորուստների արտացոլում</p>	<p>742 «Վերադասակարգման ճշգրտումներ. վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքով վերաչափումից իրացված կորուստներ»</p> <p>743 «Վերադասակարգման ճշգրտումներ. հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից իրացված կորուստներ»</p> <p>744 «Վերադասակարգման ճշգրտումներ. արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային տարբերություններից իրացված կորուստներ»</p>
<p>3. Հաշվետու ժամանակաշրջանի զուտ շահույթի տեղափոխում</p>	<p>343 «Հաշվետու տարվա զուտ շահույթ (վնաս)»</p>

ԽՈՒՄԲ 34 «ԶԲԱՇԽՎԱԾ ՇԱՀՈՒՅԹ (ԶԾԱԾԿՎԱԾ ՎՆԱՍ)»

34 «Զբաղիված շահույթ (չծածկված վնաս)» խումբն իր մեջ ներառում է հետևյալ առաջին կարգի (սինթետիկ) հաշիվները՝ 341 «Նախորդ տարիների ֆինանսական արդյունքների ճշգրտում», 342 «Նախորդ տարիների չբաղիված շահույթ (չծածկված վնաս)», 343 «Հաշվետու տարվա զուտ շահույթ (վնաս)» և 344 «Միջանկյալ շահաբաժիններ»:

Հաշիվ 341 «Նախորդ տարիների ֆինանսական արդյունքների ճշգրտում»

341 «Նախորդ տարիների ֆինանսական արդյունքների ճշգրտում» հաշիվը նախատեսված է նախորդ ժամանակաշրջաններին վերաբերող գործառնությունների գծով հաշվետու ժամանակաշրջանում հայտնաբերված սխալների ուղղումների (հետընթաց վերահաշվարկման) և հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների հետընթաց կիրառման արդյունքում առաջացած ճշգրտումների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Նախորդ տարիների սխալների ուղղման և հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների հետընթաց կիրառման արդյունքում առաջացող ճշգրտումների հաշվառման մոտեցումները նկարագրված են «Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ» ՀՀՄՍ 8-ում:

Հաշիվն ակտիվապասիվային է, կրեդիտում արտացոլվում է նախորդ ժամանակաշրջանների սխալների հետընթաց ուղղումների և հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների հետընթաց կիրառման արդյունքում առաջացած ճշգրտման գումարը, որը պետք է ավելացվի չբաղիված շահույթի սկզբնական մնացորդին, իսկ դեբետում՝ նախորդ ժամանակաշրջանների սխալների հետընթաց ուղղման և

հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների հետընթաց կիրառման արդյունքում առաջացած ճշգրտման գումարը, որը պետք է նվազեցվի չբաշխված շահույթի սկզբնական մնացորդից: Այս հաշվի դեբետային և կրեդիտային շրջանառությունների տարբերությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջում դուրս է գրվում՝ ճշտելով չբաշխված շահույթի սկզբնական մնացորդը:

341 «Նախորդ տարիների ֆինանսական արդյունքների ճշգրտում» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 3411 «Նախորդ տարիների սխալների ուղղման արդյունքում առաջացած ճշգրտում», 3412 «Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների հետընթաց կիրառման արդյունքում առաջացած ճշգրտում»:

341 «Նախորդ տարիների ֆինանսական արդյունքների ճշգրտում» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Նախորդ ժամանակաշրջաններին վերաբերող գործառնությունների գծով հաշվետու ժամանակաշրջանում հայտնաբերված սխալների հետընթաց ուղղման և հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների հետընթաց կիրառման արդյունքում առաջացած ճշգրտման արտացոլում, որոնք պետք է ավելացվեն չբաշխված շահույթի սկզբնական մնացորդին	112 «Հիմնական միջոցների մաշվածություն» 132 «Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա» 211 «Նյութեր» 215 «Արտադրանք» 216 «Ապրանքներ» և ակտիվներն ու պարտավորությունները հաշվառող այլ համապատասխան հաշիվներ
2. Նախորդ տարիների ֆինանսական արդյունքների ճշգրտման հետևանքով առաջացած շահութահարկի գծով հետաձգված հարկային ակտիվների և հետաձգված հարկային պարտավորությունների փոփոխության արտացոլում, երբ այդ հետևանքը ճշգրտում է չբաշխված շահույթի սկզբնական մնացորդը	151 «Հետաձգված հարկային ակտիվներ» 422 «Հետաձգված հարկային պարտավորություններ»
3. Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դեբետային և կրեդիտային շրջանառությունների դրական տարբերության դուրս գրում (չբաշխված շահույթի սկզբնական մնացորդի նվազեցում)	342 «Նախորդ տարիների չբաշխված շահույթ (չձեռնարկված վնաս)»

341 «Նախորդ տարիների ֆինանսական արդյունքների ճշգրտում» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Նախորդ ժամանակաշրջաններին վերաբերող գործառնությունների գծով հաշվետու ժամանակաշրջանում հայտնաբերված սխալների հետընթաց ուղղման և հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների հետընթաց կիրառման արդյունքում առաջացած ճշգրտման արտացոլում, որոնք պետք է նվազեցվեն չբաշխված շահույթի սկզբնական մնացորդից	112 «Հիմնական միջոցների մաշվածություն» 132 «Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա» 211 «Նյութեր» 215 «Արտադրանք» 216 «Ապրանքներ» և ակտիվներն ու պարտավորությունները հաշվառող այլ համապատասխան հաշիվներ
2. Նախորդ տարիների ֆինանսական արդյունքների ճշգրտման հետևանքով առաջացած շահութահարկի գծով հետաձգված հարկային ակտիվների և հետաձգված հարկային պարտավորությունների փոփոխության արտացոլում, երբ այդ հետևանքը ճշգրտում է չբաշխված շահույթի սկզբնական մնացորդը	151 «Հետաձգված հարկային ակտիվներ» 422 «Հետաձգված հարկային պարտավորություններ»

3. Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դեբետային և կրեդիտային շրջանառությունների բացասական տարբերության դուրս գրում (չբաշխված շահույթի սկզբնական մնացորդի ավելացում)	342 «Նախորդ տարիների չբաշխված շահույթ (չծածկված վնաս)»
--	--

Հաշիվ 342 «Նախորդ տարիների չբաշխված շահույթ (չծածկված վնաս)»

342 «Նախորդ տարիների չբաշխված շահույթ (չծածկված վնաս)» հաշիվը նախատեսված է նախորդ տարիների չբաշխված շահույթի (չծածկված վնասի) վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվն ակտիվապասիվային է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում է նախորդ տարվա չբաշխված շահույթը, ակտիվների վերագնահատումից արժեքի աճի՝ չբաշխված շահույթին վերագրումը, նախորդ տարիների վնասների ծածկումը պահուստային կապիտալի հաշվին, իսկ դեբետում՝ չբաշխված շահույթի օգտագործումը, նախորդ տարվա չծածկված վնասը: Այս հաշվի կրեդիտային մնացորդն իրենից ներկայացնում է հաշվետու ամսաթվի դրությամբ նախորդ տարիների չբաշխված շահույթը, իսկ դեբետային մնացորդը՝ չծածկված վնասը: Դեբետային մնացորդի դեպքում այն դասի ընդհանուր գումարում ներառվում է բացասական նշանով:

342 «Նախորդ տարիների չբաշխված շահույթ (չծածկված վնաս)» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Նախորդորդ տարվա զուտ շահույթի տեղափոխում	343 «Հաշվետու տարվա զուտ շահույթ (վնաս)»
2. Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճի՝ չբաշխված շահույթին վերագրումը	321 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճ»
3. Նախորդ տարիների վնասների ծածկումը պահուստային կապիտալի հաշվին	351 «Պահուստային կապիտալ»
4. Կանոնադրական կապիտալի նվազեցում՝ նախորդ տարիների վնասների ծածկման նպատակով	311 «Կանոնադրական կապիտալ»
5. Նախորդ տարիների չբաշխված շահույթի սկզբնական մնացորդի ավելացում (սխալների հետընթաց ուղղման և հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների հետընթաց կիրառման արդյունքում)	341 «Նախորդ տարիների ֆինանսական արդյունքների ճշգրտում»

342 «Նախորդ տարիների չբաշխված շահույթ (չծածկված վնաս)» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Նախորդորդ տարվա զուտ վնասի տեղափոխում	343 «Հաշվետու տարվա զուտ շահույթ (վնաս)»
2. Նախորդ տարիների չբաշխված շահույթի հաշվին՝	
ա) պահուստային կապիտալին հատկացումներ	351 «Պահուստային կապիտալ»
բ) շահաբաժինների հայտարարում	529 «Պարտքեր շահաբաժինների գծով»
գ) կանոնադրական կապիտալի ավելացում	311 «Կանոնադրական կապիտալ»
3. Նախորդ տարիների չբաշխված շահույթի սկզբնական մնացորդի նվազեցում (սխալների հետընթաց ուղղման և	341 «Նախորդ տարիների ֆինանսական արդյունքների ճշգրտում»

հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների հետընթաց կիսարման արդյունքում)	
--	--

Հաշիվ 343 «Հաշվետու տարվա զուտ շահույթ (վնաս)»

343 «Հաշվետու տարվա զուտ շահույթ (վնաս)» հաշիվը նախատեսված է հաշվետու տարվա զուտ շահույթի (վնասի) վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվն ակտիվապասիվային է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում է հաշվետու տարվա զուտ շահույթը, ինչպես նաև զուտ վնասի տեղափոխումը, իսկ դեբետում՝ հաշվետու տարվա զուտ վնասը, ինչպես նաև զուտ շահույթի տեղափոխումը: Այս հաշվի կրեդիտային մնացորդն իրենից ներկայացնում է հաշվետու տարվա զուտ շահույթը, իսկ դեբետային մնացորդը՝ զուտ վնասը: Դեբետային մնացորդի դեպքում այն դասի ընդհանուր գումարում ներառվում է բացասական նշանով:

343 «Հաշվետու տարվա զուտ շահույթ (վնաս)» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Հաշվետու տարվա զուտ շահույթի արտացոլում	331 «Շահույթ կամ վնաս»
2. Նախորդող տարվա զուտ վնասի տեղափոխում	342 «Նախորդ տարիների չբաշխված շահույթ (չծածկված վնաս)»

343 «Հաշվետու տարվա զուտ շահույթ (վնաս)» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Հաշվետու տարվա զուտ վնասի տեղափոխում	331 «Շահույթ կամ վնաս»
2. Նախորդ տարվա զուտ շահույթի տեղափոխում	342 «Նախորդ տարիների չբաշխված շահույթ (չծածկված վնաս)»

Հաշիվ 344 «Միջանկյալ շահաբաժիններ»

344 «Միջանկյալ շահաբաժիններ» հաշիվը նախատեսված է հաշվետու տարվա ընթացքում հայտարարված միջանկյալ շահաբաժինների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվն ակտիվային է, կարգավորող: Մասնավորապես, դեբետում արտացոլվում է հայտարարված միջանկյալ շահաբաժինների գումարը, իսկ կրեդիտում՝ հաշվետու տարվա արդյունքներով հայտարարված շահաբաժինների մարումը միջանկյալ շահաբաժինների հաշվին: Այս հաշվի մնացորդը դեբետային է և իրենից ներկայացնում է հայտարարված միջանկյալ շահաբաժինների գումարը հաշվետու ամսաթվի դրությամբ: Այն դասի ընդհանուր գումարում ներառվում է բացասական նշանով:

Հայտարարված միջանկյալ շահաբաժինների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ մասնակիցների (բաժնետերերի) և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

344 «Միջանկյալ շահաբաժիններ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
Միջանկյալ շահաբաժինների հայտարարում	529 «Պարտքեր շահաբաժինների գծով»

344 «Միջանկյալ շահաբաժիններ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
Հաշվետու տարվա արդյունքներով շահաբաժինների հայտարարումից հետո հայտարարված միջանկյալ շահաբաժինների դուրս գրում	342 «Նախորդ տարիների չբաշխված շահույթ (չծածկված վնաս)»

ԽՈՒՄԲ 35 «ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԱՅԼ ՀՈԴՎԱԾՆԵՐ»

35 «Սեփական կապիտալի այլ հոդվածներ» խումբն իր մեջ ներառում է հետևյալ առաջին կարգի (սինթետիկ) հաշիվները՝ 351 «Պահուստային կապիտալ» և 352 «Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքներ»:

Հաշիվ 351 «Պահուստային կապիտալ»

351 «Պահուստային կապիտալ» հաշիվը նախատեսված է օրենսդրությամբ սահմանված պահուստային կապիտալի ձևավորման և օգտագործման վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվը պասիվային է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում է պահուստային կապիտալին հատկացումները, իսկ դեբետում՝ օգտագործումը: Հաշվի մնացորդը կրեդիտային է և իրենից ներկայացնում է պահուստային կապիտալի չօգտագործված մնացորդը հաշվետու ամսաթվի դրությամբ:

Պահուստային կապիտալի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ կազմակերպության կողմից հաստատված ուղղությունների:

351 «Պահուստային կապիտալ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
Պահուստային կապիտալին կատարվող հատկացումներ	342 «Նախորդ տարիների չբաշխված շահույթ (չծածկված վնաս)»

351 «Պահուստային կապիտալ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
Պահուստային կապիտալի օգտագործում՝	
- վնասների ծածկման նպատակով	342 «Նախորդ տարիների չբաշխված շահույթ (չծածկված վնաս)»
- շահաբաժինների վճարման նպատակով	529 «Պարտքեր շահաբաժինների գծով»
- կանոնադրական կապիտալի ավելացման նպատակով	311 «Կանոնադրական կապիտալ»

Հաշիվ 352 «Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքներ»

352 «Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքներ» հաշիվը նախատեսված է որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքների (րայթեր,

բաժնետոմսերի օպցիոններ և վարանտներ, բաղադրյալ պարտքային գործիքում պարունակվող՝ բաժնետոմսերի փոխարկման իրավունքներ և այլն) առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվը պասիվային է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում է տեղաբաշխված որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքների արժեքը, իսկ դեբետում՝ իրագործումը: Հաշվի մնացորդը կրեդիտային է և իրենից ներկայացնում է որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքների մնացորդը հաշվետու ամսաթվի դրությամբ:

Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ ածանցյալ գործիքների տեսակների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

352 «Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքներ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքների տեղաբաշխում	251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ»
2. Թողարկված բաղադրյալ պարտքային գործիքում պարունակվող՝ որպես սեփական կապիտալ դասակարգված ածանցյալ գործիքների արտացոլում	414 «Չկրած տոկոսային ծախսեր երկարաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով» 516 «Չկրած տոկոսային ծախսեր կարճաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով»

352 «Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքներ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Թողարկված բաղադրյալ պարտքային գործիքում սեփական կապիտալի բաղադրիչը պարտավորության բաղադրիչից առանձին ճանաչելու արդյունքում առաջացող հետաձգված հարկային պարտավորության արտացոլում	422 «Հետաձգված հարկային պարտավորություններ»
2. Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքների իրագործում	311 «Կանոնադրական կապիտալ»
3. Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված՝ իրագործման ժամկետը լրացած և չիրագործված ածանցյալ գործիքներից գոյացած կապիտալի հաշվին կանոնադրական կապիտալի ավելացում	311 «Կանոնադրական կապիտալ»

ԴԱՍ 4 «ՈՋ ԸՆԹԱՑԻԿ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

Այս դասի հաշիվները, բացառությամբ կարգավորող և ակտիվապասիվային հաշիվների, պասիվային են և նախատեսված են ոչ ընթացիկ պարտավորությունների առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: 4-րդ՝ «Ոչ ընթացիկ պարտավորություններ» դասն իր մեջ ներառում է հետևյալ խմբերը՝ 41 «Երկարաժամկետ ֆինանսական պարտավորություններ» և 42 «Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ»:

Պարտավորությունների՝ ոչ ընթացիկին վերագրման մոտեցումները նկարագրված են «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» ՀՀՄՍ 1-ում:

ԽՈՒՄՐ 41 «ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

41 «Երկարաժամկետ ֆինանսական պարտավորություններ» խումբն իր մեջ ներառում է հետևյալ առաջին կարգի (սինթետիկ) հաշիվները՝ 411 «Երկարաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարներ», 412 «Երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարներ», 413 «Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարներ», 414 «Չկրած տոկոսային ծախսեր երկարաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով» և 415 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական պարտավորություններ»:

Հաշիվ 411 «Երկարաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարներ»

411 «Երկարաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարներ» հաշիվը նախատեսված է Հայաստանի Հանրապետության և արտերկրի բանկերից կամ վարկային կազմակերպություններից ստացված երկարաժամկետ (հաշվետու ամսաթվի դրությամբ մեկ տարուց ավել մարման ժամկետ ունեցող) վարկերի գծով վճարվելիք համախառն գումարների (տոկոսների և հիմնական գումարի գծով բոլոր վճարումների անվանական (չզեղչված) արժեքը) առկայության ու շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Ֆինանսական պարտավորությունների ճանաչման և չափման մոտեցումները նկարագրված են «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՍ 39-ում:

Հաշիվը պասիվային է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում է ստացված երկարաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարները, իսկ դեբետում՝ դրանց մարումը կամ կարճաժամկետ մասի տեղափոխումը: Այս հաշվի մնացորդը կրեդիտային է և իրենից ներկայացնում է երկարաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարները հաշվետու ամսաթվի դրությամբ:

Երկարաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ վարկատուների, մարման ժամկետների, առանձին վարկերի և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

411 «Երկարաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարներ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Վարկերի ստացում դրամական միջոցներով	251 «Դրամարկղ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում»
2. Վարկերի ստացում, որոնք անմիջապես ուղղվում են կրեդիտորական պարտքերի մարմանը կամ դեբիտորական պարտքերի առաջացմանը	152 «Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվներ ձեռք բերելու համար» 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով»
3. Երկարաժամկետ վարկերի գծով չկրած տոկոսային ծախսերի արտացոլում	414 «Չկրած տոկոսային ծախսեր երկարաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով»
4. Արտարժույթով արտահայտված վճարումների գծով փոխարժեքային տարբերություններից կորստի արտացոլում	725 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից կորուստներ»

411 «Երկարաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարներ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Երկարաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մասի տեղափոխում	512 «Երկարաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս»
2. Երկարաժամկետ վարկերի մարում՝ ժամկետից շուտ՝	
- փաստացի վճարված գումար՝ հաշվեկշռային արժեքը չգերազանցող մասով	251 «Դրամարկղ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում»
- փաստացի վճարված գումարի և հաշվեկշռային արժեքի դրական տարբերության չափով	729 «Այլ ծախսեր»
3. Երկարաժամկետ վարկերի գծով չկրած տոկոսային ծախսերի մնացորդի դուրս գրում	414 «Չկրած տոկոսային ծախսեր երկարաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով»
4. Արտարժույթով արտահայտված վճարումների գծով փոխարժեքային տարբերություններից օգուտի արտացոլում	625 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտներ»

Հաշիվ 412 «Երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարներ»

412 «Երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարներ» հաշիվը նախատեսված է երկարաժամկետ (հաշվետու ամսաթվի դրությամբ մեկ տարուց ավել մարման ժամկետ ունեցող) փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարների (տոկոսների և հիմնական գումարի գծով

բոլոր վճարումների անվանական (չգեղջված) արժեքը) առկայության ու շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Ֆինանսական պարտավորությունների ճանաչման և չափման մոտեցումները նկարագրված են «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՍ 39-ում: Ֆինանսական գործիքներ թողարկողի տեսանկյունից դրանց դասակարգումը ֆինանսական պարտավորության և (կամ) սեփական կապիտալի նկարագրված է «Ֆինանսական գործիքներ. ներկայացումը» ՀՀՄՍ 32-ում:

Հաշիվը պասիվային է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում է ստացված երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարները, իսկ դեբետում՝ դրանց մարումը կամ կարճաժամկետ մասի տեղափոխումը: Այս հաշվի մնացորդը կրեդիտային է և իրենից ներկայացնում է երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարները հաշվետու ամսաթվի դրությամբ:

412 «Երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարներ» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 4121 «Երկարաժամկետ մուրհակների գծով վճարվելիք համախառն գումարներ», 4122 «Երկարաժամկետ չփոխարկելի պարտատոմսերի գծով վճարվելիք համախառն գումարներ», 4123 «Երկարաժամկետ փոխարկելի պարտատոմսերի գծով վճարվելիք համախառն գումարներ», 4124 «Մարելի արտոնյալ բաժնետոմսերի գծով վճարվելիք համախառն գումարներ», 4125 «Այլ երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարներ»:

Երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ փոխատուների, մարման ժամկետների, առանձին փոխառությունների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

412 «Երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարներ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Փոխառությունների ստացում դրամական միջոցներով	251 «Դրամարկը» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ»
2. Փոխառությունների ստացում, որոնք անմիջապես ուղղվում են կրեդիտորական պարտքերի մարմանը	521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով»
3. Երկարաժամկետ փոխառությունների գծով չկրած տոկոսային ծախսերի արտացոլում	414 «Չկրած տոկոսային ծախսեր երկարաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով»
4. Արտարժույթով արտահայտված վճարումների գծով փոխարժեքային տարբերություններից կորստի արտացոլում	725 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից կորուստներ»

412 «Երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարներ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մասի տեղափոխում	514 «Երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս»

2. Փոխառությունների մարում (պարտատոմսերի հետ գնում) ժամկետից շուտ կամ վճարի դիմաց դրանց փոխանցում երրորդ անձի	
- փաստացի վճարված գումար՝ հաշվեկշռային արժեքը չգերազանցող մասով	251 «Դրամարկո» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ»
- փաստացի վճարված գումարի և հաշվեկշռային արժեքի դրական տարբերության չափով	729 «Այլ ծախսեր»
3. Կանոնադրական կապիտալի հետագա ավելացում՝ պարտավորությունների մարմանը կամ փոխարկելի պարտքային գործիքների փոխարկմամբ	311 «Կանոնադրական կապիտալ» 312 «Չվճարված կապիտալ»
4. Երկարաժամկետ փոխառությունների գծով չկրած տոկոսային ծախսերի մնացորդի դուրս գրում	414 «Չկրած տոկոսային ծախսեր երկարաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով»
5. Արտարժույթով արտահայտված վճարումների գծով փոխարժեքային տարբերություններից օգուտի արտացոլում	625 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտներ»

Հաշիվ 413 «Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարներ»

413 «Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարներ» հաշիվը նախատեսված է ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարների առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարների ճանաչման, չափման և գնահատման մոտեցումները նկարագրված են «Վարձակալություն» ՀՀՄՍ 17-ում:

Հաշիվը պասիվային է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում է ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարները, իսկ դեբետում՝ դրանց մարումը, դուրս գրումը: Այս հաշվի մնացորդը կրեդիտային է և իրենից ներկայացնում է ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարները հաշվետու ամսաթվի դրությամբ:

Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ վարձատուների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

413 «Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարներ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների արտացոլում (իրական արժեքով կամ նվազագույն վարձավճարների ներկա արժեքով, եթե վերջինս ավելի ցածր է)	119 «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցներ»
2. Ֆինանսական վարձակալության գծով չկրած տոկոսային ծախսերի (վճարվելիք համախառն գումարների և պարտավորության սկզբնապես ճանաչված գումարի միջև տարբերության) արտացոլում	414 «Չկրած տոկոսային ծախսեր երկարաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով»
3. Արտարժույթով արտահայտված վճարումների գծով փոխարժեքային տարբերություններից կորուստի արտացոլում	725 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից կորուստներ»

413 «Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարներ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մասի տեղափոխում	515 «Ֆինանսական վարձակալության վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս»
2. Ֆինանսական վարձակալության գծով երկարաժամկետ պարտքերի մարում՝ ժամկետից շուտ	
- փաստացի վճարված (վճարվելիք) գումար՝ հաշվեկշռային արժեքը չգերազանցող մասով	251 «Դրամարկղ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 531 «Այլ ընթացիկ պարտավորություններ»
- փաստացի վճարված գումարի և հաշվեկշռային արժեքի տարբերության չափով	729 «Այլ ծախսեր»
3. Ֆինանսական վարձակալության գծով չկրած տոկոսային ծախսերի մնացորդի դուրս գրում	414 «Չկրած տոկոսային ծախսեր երկարաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով»
4. Վարձակալած հիմնական միջոցների վերադարձում վարձատուին	119 «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցներ»
5. Արտարժույթով արտահայտված վճարումների գծով փոխարժեքային տարբերություններից օգուտի արտացոլում	625 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտներ»

Հաշիվ 414 «Չկրած տոկոսային ծախսեր երկարաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով»

414 «Չկրած տոկոսային ծախսեր երկարաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով» հաշիվը նախատեսված է ամորտիզացված արժեքով հաշվառվող երկարաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով չկրած տոկոսային ծախսերի (ամորտիզացված արժեքով հաշվառվող երկարաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով վճարվելիք համախառն գումարների և դրանց զեղչված արժեքի կամ սկզբնապես ճանաչված հաշվեկշռային արժեքի տարբերությունը) վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Ընդ որում, չկրած տոկոսային ծախսերի գումարը որոշելիս գործարքի հետ կապված ծախսումները (բացառությամբ ֆինանսական վարձակալության գծով երկարաժամկետ ֆինանսական պարտավորության գծով գործարքի հետ կապված ծախսումների) գումարվում են: Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորությունների գծով չկրած տոկոսային ծախսերի, ինչպես նաև գործարքի հետ կապված ծախսումների որոշման և գնահատման մոտեցումները նկարագրված են «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՍ 39-ում և «Վարձակալություն» ՀՀՄՍ 17-ում:

Հաշիվն ակտիվային է, կարգավորող: Մասնավորապես, դեբետում արտացոլվում է ամորտիզացված արժեքով հաշվառվող երկարաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով չկրած տոկոսային ծախսերը, ներառյալ՝ գործարքի հետ կապված ծախսումները, իսկ կրեդիտում՝ չկրած տոկոսային ծախսերի հաշվեգրումը ծախսերին: Հաշվի մնացորդը դեբետային է և իրենից ներկայացնում է ամորտիզացված արժեքով հաշվառվող երկարաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով չկրած տոկոսային ծախսերի գումարը հաշվետու ամսաթվի դրությամբ: Այն դասի ընդհանուր գումարում ներառվում է բացասական նշանով:

414 «Չկրած տոկոսային ծախսեր երկարաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 4141 «Չկրած տոկոսային ծախսեր երկարաժամկետ

վարկերի գծով», 4142 «Չկրած տոկոսային ծախսեր երկարաժամկետ փոխառությունների գծով», 4143 «Չկրած տոկոսային ծախսեր ֆինանսական վարձակալության գծով»:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող երկարաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով չկրած տոկոսային ծախսերի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ վարկատուների, փոխատուների, վարձատուների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

414 «Չկրած տոկոսային ծախսեր երկարաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Չկրած տոկոսային ծախսերի արտացոլում	411 «Երկարաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարներ» 412 «Երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարներ» 413 «Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարներ»
2. Գործարքի հետ կապված ծախսումների արտացոլում (բացառությամբ ֆինանսական վարձակալության գծով սկզբնավորման ծախսերի)	228 «Դեբիտորական պարտքեր առհաշիվ տրված գումարների գծով» 251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում» 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով»
3. Թողարկված բաղադրյալ պարտքային գործիքում պարունակվող՝ որպես սեփական կապիտալ դասակարգված ածանցյալ գործիքների արտացոլում	352 «Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքներ»
4. Արտոնյալ (անտոկոս կամ շուկայականից ցածր տոկոսով) փոխառությունների արտոնության բաղադրիչը՝	
ա) դասակարգված որպես պետական շնորհ	421 «Ակտիվներին վերաբերող շնորհներ»
բ) դասակարգված որպես պետական շնորհ	628 «Շնորհներից և անհատույց ստացումներից եկամուտներ»
5. Արտարժույթով արտահայտված երկարաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով փոխարժեքային տարբերություններից կորստի ճշտում՝ չկրած տոկոսային ծախսերի մասով	725 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից կորուստներ»

414 «Չկրած տոկոսային ծախսեր երկարաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Չկրած տոկոսային ծախսերի հաշվեգրում ծախսերին	727 «Ֆինանսական ծախսեր»
2. Չկրած տոկոսային ծախսերի կապիտալացում	821 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների կառուցման (ստեղծման) ծախսումներ» 822 «Սարքավորումների տեղակայման ծախսումներ» 823 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումներ»

	824 «Ոչ նյութական ակտիվների ներստեղծման ծախսումներ» 826 «Այլ ոչ ընթացիկ ակտիվների ստեղծման ծախսումներ» 118 «Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ»
3. Երկարաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով չկրած տոկոսային ծախսերի վերադասակարգում որպես կարճաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով չկրած տոկոսային ծախսեր	516 «Չկրած տոկոսային ծախսեր կարճաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով»
4. Մարված ֆինանսական պարտավորությունների գծով չկրած տոկոսային ծախսերի մնացորդի դուրս գրում	411 «Երկարաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարներ» 412 «Երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարներ» 413 «Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարներ»
5. Արտարժույթով արտահայտված երկարաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով փոխարժեքային տարբերություններից օգուտի ճշտում՝ չկրած տոկոսային ծախսերի մասով	625 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտներ»

Հաշիվ 415 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական պարտավորություններ»

415 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական պարտավորություններ» հաշիվը նախատեսված է որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական պարտավորությունների առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Որպես հեջավորման գործիք նախատեսված ֆինանսական պարտավորությունների ճանաչման և չափման մոտեցումները նկարագրված են «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՍ 39-ում:

Հաշիվը պասիվային է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում է որպես հեջավորման գործիք նախատեսված և ոչ ընթացիկ ֆինանսական պարտավորության վերածված ֆինանսական ակտիվների արժեքը, իրական արժեքով վերաչափումից արժեքի աճը, իսկ դեբետում՝ մարված որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական պարտավորությունների արժեքը, իրական արժեքով վերաչափումից արժեքի նվազումը: Այս հաշվի մնացորդը կրեդիտային է և իրենից ներկայացնում է որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական պարտավորությունների արժեքը հաշվետու ամսաթվի դրությամբ:

Որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական պարտավորությունների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ հեջավորման գործիքների տեսակների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

415 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական պարտավորություններ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների վերածվելը ոչ ընթացիկ ֆինանսական պարտավորությունների՝ հաշվետու ամսաթվի դրությամբ (իրական արժեքով վերաչափումից առաջացած կրեդիտային մնացորդի չափով)	148 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ»
2. Որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական պարտավորությունների վերածվելը ոչ ընթացիկ	148 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ»

ցիկ ֆինանսական ակտիվների՝ հաշվետու ամսաթվի դրությամբ (իրական արժեքով վերաչափումից առաջացած դեբետային մնացորդի չափով)	
3. Որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական պարտավորությունների՝ իրական արժեքով վերաչափումից արժեքի աճ՝	
ա) երբ ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում (դրամական հոսքերի արդյունավետ հեջում)	773 «Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից կորուստներ»
բ) երբ ճանաչվում է շահույթում կամ վնասում (իրական արժեքի հեջում, ինչպես նաև դրամական հոսքերի ոչ արդյունավետ հեջում)	726 «Ոչ գործառնական ֆինանսական գործիքների վերաչափումից և արժեզրկումից (անհավաքագրելիությունից) կորուստներ»
4. Արտարժույթով արտահայտված վճարումների գծով փոխարժեքային տարբերություններից կորստի արտացոլում	725 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից կորուստներ»

415 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական պարտավորություններ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական պարտավորությունների մարում	251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ»
2. Որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական պարտավորությունների վերադասակարգում որպես ընթացիկ ֆինանսական պարտավորություններ	518 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ընթացիկ ֆինանսական պարտավորություններ»
3. Որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական պարտավորությունների՝ իրական արժեքով վերաչափումից արժեքի նվազում՝	
ա) երբ ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում (դրամական հոսքերի արդյունավետ հեջում)	673 «Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից օգուտներ»
բ) երբ շահույթում կամ վնասում (իրական արժեքի հեջում, ինչպես նաև դրամական հոսքերի ոչ արդյունավետ հեջում)	626 «Ոչ գործառնական ֆինանսական գործիքների վերաչափումից և արժեզրկման (անհավաքագրելիության) հակադարձումից օգուտներ»
4. Արտարժույթով արտահայտված վճարումների գծով փոխարժեքային տարբերություններից օգուտի արտացոլում	625 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտներ»

ԽՈՒՄԲ 42 «ԱՅԼ ՈՉ ԸՆԹԱՑԻԿ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

42 «Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ» խումբն իր մեջ ներառում է հետևյալ առաջին կարգի (սինթետիկ) հաշիվները՝ 421 «Ակտիվներին վերաբերող շնորհներ», 422 «Հետաձգված հարկային պարտավորություններ», 425 «Ոչ ընթացիկ պահուստներ», 426 «Սահմանված հատուցումների պլանների գծով պարտականության ներկա արժեքը», 427 «Դեռևս չճանաչված ակտուարային օգուտ (վնաս)», 428 «Դեռևս չճանաչված անցյալ ծառայության արժեքի աճ» և 429 «Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ»:

Հաշիվ 421 «Ակտիվներին վերաբերող շնորհներ»

421 «Ակտիվներին վերաբերող շնորհներ» հաշիվը նախատեսված է ակտիվներին վերաբերող շնորհների (որպես շնորհ ստացված ոչ ընթացիկ ակտիվների, ինչպես նաև դրանց գնման, կառուցման կամ այլ կերպ ձեռք բերման նպատակով ստացված ակտիվների) վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Ակտիվներին վերաբերող շնորհների հաշվապահական հաշվառման մոտեցումները նկարագրված են «Պետական շնորհների հաշվառում և պետական օգնության բացահայտում» ՀՀՄՍ 20-ում:

Հաշիվը պասիվային է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում է ակտիվներին վերաբերող շնորհների գումարը, իսկ դեբետում՝ դրանց վերագրումը հաշվետու ժամանակաշրջանի եկամուտներին: Այս հաշվի մնացորդը կրեդիտային է և իրենից ներկայացնում է ակտիվներին վերաբերող շնորհների եկամուտ չճանաչված մասը հաշվետու ամսաթվի դրությամբ:

Ակտիվներին վերաբերող շնորհների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ դրանց առաջացման և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

421 «Ակտիվներին վերաբերող շնորհներ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Որպես պետական շնորհ ակտիվների ստացում	111 «Մաշվող հիմնական միջոցներ» 115 «Հողամասեր» 116 «Կենսաբանական ակտիվներ» 118 «Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ» 131 «Ոչ նյութական ակտիվներ» 211 «Նյութեր» 251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում»
2. Արտոնյալ (անտոկոս կամ շուկայականից ցածր տոկոսով) փոխառությունների արտոնության բաղադրիչը՝ դասակարգված որպես պետական շնորհ	414 «Չկրած տոկոսային ծախսեր երկարաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով» 516 «Չկրած տոկոսային ծախսեր կարճաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով»

421 «Ակտիվներին վերաբերող շնորհներ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Շնորհների վերադարձում՝ չմարված (դեռևս եկամուտ չճանաչված) մնացորդի հաշվին	111 «Մաշվող հիմնական միջոցներ» 115 «Հողամասեր» 116 «Կենսաբանական ակտիվներ» 118 «Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ» 131 «Ոչ նյութական ակտիվներ» 211 «Նյութեր» 251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում»
2. Հետաձգված եկամուտների վերագրումը հաշվետու ժամանակաշրջանի եկամուտներին	628 «Շնորհներից և անհատույց ստացումներից եկամուտներ»

Հաշիվ 422 «Հետաձգված հարկային պարտավորություններ»

422 «Հետաձգված հարկային պարտավորություններ» հաշիվը նախատեսված է հարկվող ժամանակավոր տարբերությունների հետևանքով առաջացած շահութահարկի գծով հետաձգված հարկային պարտավորությունների առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Շահութահարկի գծով հետաձգված հարկային պարտավորությունների որոշման, ճանաչման, չափման մոտեցումները նկարագրված են «Շահութահարկ» ՀՀՄՍ 12-ում:

Հաշիվը պասիվային է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում է շահութահարկի գծով առաջացած հետաձգված հարկային պարտավորությունների գումարը, իսկ դեբետում՝ դրանց մարումը: Այս հաշվի մնացորդը կրեդիտային է և իրենից ներկայացնում է շահութահարկի գծով հետաձգված հարկային պարտավորությունների գումարը հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկային պարտավորությունների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ առաջացման ուղղությունների, մարման ժամկետների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

422 «Հետաձգված հարկային պարտավորություններ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
Շահութահարկի գծով հետաձգված հարկային պարտավորությունների առաջացում կամ ավելացում`	
ա) շարունակվող գործունեությունից շահույթում կամ վնասում ճանաչվող հոդվածների գծով	751 «Շահութահարկի գծով ծախս (եկամուտ)»
բ) շարունակվող գործունեությունից այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչվող հոդվածների գծով	671 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից օգուտներ» 672 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների` իրական արժեքով վերաչափումից օգուտներ» 673 «Հեջավորման գործիքների` իրական արժեքով վերաչափումից օգուտներ» 674 «Արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային օգուտներ» 771 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից կորուստներ» 772 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների` իրական արժեքով վերաչափումից կորուստներ» 773 «Հեջավորման գործիքների` իրական արժեքով վերաչափումից կորուստներ» 774 «Արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային տարբերություններից կորուստներ»
գ) ընդհատված գործունեությանը վերաբերող	733 «Շահութահարկ ընդհատված գործունեության»
դ) նախորդ ժամանակաշրջանների սխալների հետընթաց վերահաշվարկման (ուղղման) կամ հաշվապահական հաշվառման քաղաքականության հետընթաց կիրառման արդյունքում	341 «Նախորդ տարիների ֆինանսական արդյունքների ճշգրտում»
ե) թողարկված բաղադրյալ պարտքային գործիքում սեփական կապիտալի բաղադրիչը պարտավորության բաղադրիչից առանձին ճանաչելու արդյունքում	352 «Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքներ»

422 «Հետաձգված հարկային պարտավորություններ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Շահութահարկի գծով հետաձգված հարկային պարտավորությունների մարում (նվազում)	
ա) շարունակվող գործունեությունից շահույթում կամ վնասում ճանաչվող հոդվածների գծով	751 «Շահութահարկի գծով ծախս (եկամուտ)»
բ) շարունակվող գործունեությունից այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչվող հոդվածների գծով	671 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից օգուտներ» 672 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից օգուտներ» 673 «Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից օգուտներ» 674 «Արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային օգուտներ» 771 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից կորուստներ» 772 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից կորուստներ» 773 «Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից կորուստներ» 774 «Արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային տարբերություններից կորուստներ»
գ) ընդհատված գործունեությանը վերաբերող	733 «Շահութահարկ ընդհատված գործունեության»
դ) նախորդ ժամանակաշրջանների սխալների հետընթաց վերահաշվարկման (ուղղման) կամ հաշվապահական հաշվառման քաղաքականության հետընթաց կիրառման արդյունքում	341 «Նախորդ տարիների ֆինանսական արդյունքների ճշգրտում»
2. Շահութահարկի գծով հետաձգված հարկային պարտավորությունների հաշվանցում հետաձգված հարկային ակտիվների հաշվին	151 «Հետաձգված հարկային ակտիվներ»

Հաշիվ 425 «Ոչ ընթացիկ պահուստներ»

425 «Ոչ ընթացիկ պահուստներ» հաշիվը նախատեսված է որպես պարտավորություն ճանաչվող ոչ ընթացիկ պահուստների առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Ոչ ընթացիկ պահուստների ճանաչման, չափման և օգտագործման մոտեցումները նկարագրված են «Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ» ՀՀՄՍ 37-ում:

Հաշիվը պասիվային է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում է ճանաչված ոչ ընթացիկ պահուստների գումարը, զեղչման ազդեցության ճշգրտումը (զեղչի հետպտույտը), իսկ դեբետում՝ դրանց տեղափոխումը: Այս հաշվի մնացորդը կրեդիտային է և իրենից ներկայացնում է ոչ ընթացիկ պահուստների մնացորդը հաշվետու ամսաթվի դրությամբ:

Ոչ ընթացիկ պահուստների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ առանձին պահուստների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

425 «Ոչ ընթացիկ պահուստներ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Երաշխիքային վաճառքի գծով սպասարկման և վերանորոգման ծախսերի համար ստեղծված ոչ ընթացիկ պահուստի ճանաչում (ներկա (զեղչված) արժեքով)	714 «Գործառնական այլ ծախսեր»
2. Հիմնական միջոցների ապատեղակայման և քանդման, ինչպես նաև տեղանքի վերականգնման և նմանատիպ գնահատված այլ ծախսումների համար ստեղծված ոչ ընթացիկ պահուստի ճանաչում (ներկա (զեղչված) արժեքով)	821 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների կառուցման (ստեղծման) ծախսումներ» 826 «Այլ ոչ ընթացիկ ակտիվների ստեղծման ծախսումներ»
3. Հիմնական միջոցների ապատեղակայման և քանդման, ինչպես նաև տեղանքի վերականգնման և նմանատիպ այլ ծախսումների գծով ճանաչված ոչ ընթացիկ պահուստի ավելացում (գնահատականների փոփոխության արդյունքում), որը ճանաչվում է հիմնական միջոցի սկզբնական արժեքում	
ա) երբ տվյալ հիմնական միջոցը չափվում է ինքնարժեքի մոդելով	111 «Մաշվող հիմնական միջոցներ»
բ) երբ տվյալ հիմնական միջոցը չափվում է վերագնահատման մոդելով	724 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից կորուստներ» 771 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից կորուստներ»
4. Ոչ ընթացիկ պահուստների զեղչման ազդեցության ճշգրտման (զեղչի հետպտույտի) հետևանքով առաջացած տոկոսային ծախսեր	727 «Ֆինանսական ծախսեր»

425 «Ոչ ընթացիկ պահուստներ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Հիմնական միջոցների ապատեղակայման և քանդման, ինչպես նաև տեղանքի վերականգնման և նմանատիպ այլ ծախսումների գծով ճանաչված ոչ ընթացիկ պահուստի նվազում (գնահատականների փոփոխության արդյունքում), որը ճանաչվում է հիմնական միջոցի սկզբնական արժեքում	
ա) երբ տվյալ հիմնական միջոցը չափվում է ինքնարժեքի մոդելով	111 «Մաշվող հիմնական միջոցներ»
բ) երբ տվյալ հիմնական միջոցը չափվում է վերագնահատման մոդելով	624 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից օգուտներ» 671 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից օգուտներ»
2. Ճանաչված պահուստների նվազում՝ տնտեսական օգուտների արտահոսքի գնահատականի կամ զեղչման դրույքի փոփոխության արդյունքում (բացի հիմնական միջոցների սկզբնական արժեքում ճանաչվող նվազումից)	629 «Այլ եկամուտներ»
3. Ոչ ընթացիկ պահուստների ընթացիկ մասի տեղափոխում	543 «Ընթացիկ պահուստներ»

Հաշիվ 426 «Սահմանված հատուցումների պլանների գծով պարտականության ներկա արժեքը»

426 «Սահմանված հատուցումների պլանների գծով պարտականության ներկա արժեքը» հաշիվը նախատեսված է սահմանված հատուցումների պլանների գծով պարտականության (ներկա (զեղչված) արժեքով) վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Սահմանված հատուցումների պլանների հաշվապահական հաշվառման մոտեցումները նկարագրված են «Աշխատակիցների հատուցումներ» ՀՀՄՍ 19-ում:

Հաշիվը պասիվային է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում է ընթացիկ ծառայության արժեքը (ընթացիկ ժամանակաշրջանում աշխատակիցների կողմից ծառայություններ մատուցելու հետևանքով պարտականության ներկա արժեքի աճը), տոկոսների արժեքը (հատուցումների վճարման ժամկետը մոտենալու հետևանքով պարտականության ներկա արժեքի աճը), անցյալ ծառայության արժեքի դրական աճը՝ երաշխավորված և չերաշխավորված հատուցումների գծով, պարտականության գծով ակտուարային վնասների գումարը, իսկ դեբետում՝ սահմանված հատուցումների պլաններից վճարված հատուցումների գումարը, անցյալ ծառայության արժեքի բացասական աճը՝ երաշխավորված և չերաշխավորված հատուցումների գծով, պարտականության գծով ակտուարային օգուտների գումարը:

Սահմանված հատուցումների պլանների գծով պարտականության վերլուծական հաշվառումը տարվում է ըստ պլանների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

426 «Սահմանված հատուցումների պլանների գծով պարտականության ներկա արժեքը» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Ընթացիկ ծառայության արժեքի, տոկոսների արժեքի, անցյալ ծառայության արժեքի դրական աճի (երաշխավորված հատուցումների գծով) արտացոլում	712 «Իրացման ծախսեր» 713 «Վարչական ծախսեր» 811 «Հիմնական արտադրություն» 812 «Օժանդակ արտադրություն» 813 «Անուղղակի արտադրական ծախսումներ» 814 «Խոտան և դրա շտկման ծախսումներ» 821 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների կառուցման (ստեղծման) ծախսումներ» 822 «Սարքավորումների տեղակայման ծախսումներ» 823 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումներ» 824 «Ոչ նյութական ակտիվների ներստեղծման ծախսումներ» 825 «Ոչ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումներ» 826 «Այլ ոչ ընթացիկ ակտիվների ստեղծման ծախսումներ»
2. Անցյալ ծառայության արժեքի դրական աճի արտացոլում՝ չերաշխավորված հատուցումների գծով	428 «Դեռևս չճանաչված անցյալ ծառայության արժեքի աճ»
3. Պարտականության գծով ակտուարային վնասների արտացոլում	427 «Դեռևս չճանաչված ակտուարային օգուտ (վնաս)» 775 «Ակտուարային վնասներ»

426 «Սահմանված հատուցումների պլանների գծով պարտականության ներկա արժեքը» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
	153 «Սահմանված հատուցումների պլանների ակտիվներ»

1. Սահմանված հատուցումների պլաններից վճարված հատուցումների արտացոլում	
2. Անցյալ ծառայության արժեքի բացասական աճի արտացոլում (երաշխավորված հատուցումների գծով)	712 «Իրացման ծախսեր» 713 «Վարչական ծախսեր» 811 «Հիմնական արտադրություն» 812 «Օժանդակ արտադրություն» 813 «Անուղղակի արտադրական ծախսումներ» 814 «Խոտան և դրա շտկման ծախսումներ» 821 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների կառուցման (ստեղծման) ծախսումներ» 822 «Սարքավորումների տեղակայման ծախսումներ» 823 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումներ» 824 «Ոչ նյութական ակտիվների ներստեղծման ծախսումներ» 825 «Ոչ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումներ» 826 «Այլ ոչ ընթացիկ ակտիվների ստեղծման ծախսումներ»
3. Անցյալ ծառայության արժեքի բացասական աճի արտացոլում՝ չերաշխավորված հատուցումների գծով	428 «Դեռևս չճանաչված անցյալ ծառայության արժեքի աճ»
4. Պարտականության գծով ակտուարային օգուտների արտացոլում	427 «Դեռևս չճանաչված ակտուարային օգուտ (վնաս)» 675 «Ակտուարային օգուտներ»

Հաշիվ 427 «Դեռևս չճանաչված ակտուարային օգուտ (վնաս)»

427 «Դեռևս չճանաչված ակտուարային օգուտ (վնաս)» հաշիվը նախատեսված է սահմանված հատուցումների պլանների ներքո պարտականության գծով դեռևս չճանաչված ակտուարային օգուտների և վնասների, ինչպես նաև պլանների ակտիվների գծով դեռևս չճանաչված ակտուարային օգուտների և վնասների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Սահմանված հատուցումների պլանների ներքո պարտականության գծով դեռևս չճանաչված ակտուարային օգուտների և վնասների, ինչպես նաև պլանների ակտիվների գծով դեռևս չճանաչված ակտուարային օգուտների և վնասների որոշման և դրանց ճանաչման մոտեցումները նկարագրված են «Աշխատակիցների հատուցումներ» ՀՀՄՍ 19-ում:

Հաշիվն ակտիվապասիվային է, կարգավորող: Կրեդիտում արտացոլվում է սահմանված հատուցումների պլանների ներքո պարտականության գծով դեռևս չճանաչված ակտուարային օգուտների գումարը և պլանների ակտիվների գծով դեռևս չճանաչված ակտուարային օգուտների գումարը, ճանաչված ակտուարային վնասների գումարը, իսկ դեբետում՝ դեռևս չճանաչված ակտուարային վնասների գումարը, ճանաչված ակտուարային օգուտների գումարը:

Դեռևս չճանաչված ակտուարային օգուտների և վնասների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ պլանների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

427 «Դեռևս չճանաչված ակտուարային օգուտ (վնաս)» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Սահմանված հատուցումների պլանների ներքո պարտականության գծով ակտուարային օգուտների արտացոլում	426 «Սահմանված հատուցումների պլանների գծով պարտականության ներկա արժեքը
2. Պլանների ակտիվների գծով ակտուարային օգուտների արտացոլում	153 «Սահմանված հատուցումների պլանների ակտիվներ»

<p>3. Դեռևս չճանաչված ակտուարային վնասների ճանաչում</p>	<p>712 «Իրացման ծախսեր» 713 «Վարչական ծախսեր» 811 «Հիմնական արտադրություն» 812 «Օժանդակ արտադրություն» 813 «Անուղղակի արտադրական ծախսումներ» 814 «Խոտան և դրա շտկման ծախսումներ» 821 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների կառուցման (ստեղծման) ծախսումներ» 822 «Սարքավորումների տեղակայման ծախսումներ» 823 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների կապիտալացվող հետագա ծախսումներ» 824 «Ոչ նյութական ակտիվների ներստեղծման ծախսումներ» 825 «Ոչ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումներ» 826 «Այլ ոչ ընթացիկ ակտիվների ստեղծման ծախսումներ»</p>
---	---

427 «Դեռևս չճանաչված ակտուարային օգուտ (վնաս)» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
<p>1. Սահմանված հատուցումների պլանների ներքո պարտականության գծով ակտուարային վնասների արտացոլում</p>	<p>426 «Սահմանված հատուցումների պլանների գծով պարտականության ներկա արժեքը»</p>
<p>2. Պլանների ակտիվների գծով ակտուարային վնասների արտացոլում</p>	<p>153 «Սահմանված հատուցումների պլանների ակտիվներ»</p>
<p>3. Դեռևս չճանաչված ակտուարային օգուտների ճանաչում</p>	<p>712 «Իրացման ծախսեր» 713 «Վարչական ծախսեր» 811 «Հիմնական արտադրություն» 812 «Օժանդակ արտադրություն» 813 «Անուղղակի արտադրական ծախսումներ» 814 «Խոտան և դրա շտկման ծախսումներ» 821 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների կառուցման (ստեղծման) ծախսումներ» 822 «Սարքավորումների տեղակայման ծախսումներ» 823 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումներ» 824 «Ոչ նյութական ակտիվների ներստեղծման ծախսումներ» 825 «Ոչ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումներ» 826 «Այլ ոչ ընթացիկ ակտիվների ստեղծման ծախսումներ»</p>

Հաշիվ 428 «Դեռևս չճանաչված անցյալ ծառայության արժեքի աճ»

428 «Դեռևս չճանաչված անցյալ ծառայության արժեքի աճ» հաշիվը նախատեսված է չերաշխավորված հատուցումների գծով դեռևս չճանաչված անցյալ ծառայության արժեքի աճի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Անցյալ ծառայության արժեքի աճի որոշման և ճանաչման մոտեցումները նկարագրված են «Աշխատակիցների հատուցումներ» ՀՀՄՍ 19-ում:

Հաշիվն ակտիվապասիվային է, կարգավորող: Կրեդիտում արտացոլվում է դեռևս չճանաչված անցյալ ծառայության արժեքի բացասական աճը, չճանաչված դրական աճի ճանաչումը, իսկ դեբետում՝ դեռևս չճանաչված անցյալ ծառայության արժեքի դրական աճը, չճանաչված բացասական աճի ճանաչումը:

Դեռևս չճանաչված անցյալ ծառայության արժեքի աճի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ պլանների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

428 «Դեռևս չճանաչված անցյալ ծառայության արժեքի անձ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Անցյալ ծառայության արժեքի բացասական անհի արտացոլում՝ չերաշխավորված հատուցումների գծով	426 «Սահմանված հատուցումների պլանների գծով պարտականության ներկա արժեքը»
2. Դեռևս չճանաչված անցյալ ծառայության արժեքի դրական անհի ճանաչում	712 «Իրացման ծախսեր» 713 «Վարչական ծախսեր» 811 «Հիմնական արտադրություն» 812 «Օժանդակ արտադրություն» 813 «Անուղղակի արտադրական ծախսումներ» 814 «Խոտան և դրա շտկման ծախսումներ» 821 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների կառուցման (ստեղծման) ծախսումներ» 822 «Սարքավորումների տեղակայման ծախսումներ» 823 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների կապիտալացվող հետագա ծախսումներ» 824 «Ոչ նյութական ակտիվների ներստեղծման ծախսումներ» 825 «Ոչ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումներ» 826 «Այլ ոչ ընթացիկ ակտիվների ստեղծման ծախսումներ»

428 «Դեռևս չճանաչված անցյալ ծառայության արժեքի անձ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Անցյալ ծառայության արժեքի դրական անհի արտացոլում՝ չերաշխավորված հատուցումների գծով	426 «Սահմանված հատուցումների պլանների գծով պարտականության ներկա արժեքը»
2. Դեռևս չճանաչված անցյալ ծառայության արժեքի բացասական անհի ճանաչում	712 «Իրացման ծախսեր» 713 «Վարչական ծախսեր» 811 «Հիմնական արտադրություն» 812 «Օժանդակ արտադրություն» 813 «Անուղղակի արտադրական ծախսումներ» 814 «Խոտան և դրա շտկման ծախսումներ» 821 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների կառուցման (ստեղծման) ծախսումներ» 822 «Սարքավորումների տեղակայման ծախսումներ» 823 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների կապիտալացվող հետագա ծախսումներ» 824 «Ոչ նյութական ակտիվների ներստեղծման ծախսումներ» 825 «Ոչ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումներ» 826 «Այլ ոչ ընթացիկ ակտիվների ստեղծման ծախսումներ»

Հաշիվ 429 «Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ»

429 «Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ» հաշիվը նախատեսված է հետաձգված եկամուտ հանդիսացող ոչ ընթացիկ պարտավորությունների, մասնավորապես, գործառնական վարձակալության գծով վարձատուի կողմից հետագա տարիների համար ստացված կանխավճարի, հաճախորդների հավատարմության

ծրագրերի ներքո մեկ տարուց ավելի ժամկետով հետաձգված եկամուտների և այլ ոչ ընթացիկ պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվն ակտիվապասիվային է, կարգավորող: Կրեդիտում արտացոլվում է դեռևս չճանաչված անցյալ ծառայության արժեքի բացասական աճը, չճանաչված դրական աճի ճանաչումը, իսկ դեբետում՝ դեռևս չճանաչված անցյալ ծառայության արժեքի դրական աճը, չճանաչված բացասական աճի ճանաչումը:

Այլ ոչ ընթացիկ պարտավորությունների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ պարտավորությունների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

429 «Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Գործառնական վարձակալության գծով վարձատուի կողմից հետագա տարիների համար կանխավճարի կամ հաճախորդների հավատարմության ծրագրերի ներքո մեկ տարուց ավելի ժամկետով հետաձգված եկամուտների ստացում դրամական միջոցներով	251 «Դրամարկը» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում»
2. Գործառնական վարձակալության գծով և այլ պարտավորությունների հաշվեգրում, որոնց վճարման ժամկետը վրա է հասնելու ավելի քան մեկ տարի հետո	712 «Իրացման ծախսեր» 713 «Վարչական ծախսեր» 811 «Հիմնական արտադրություն» 812 «Օժանդակ արտադրություն» 813 «Անուղղակի արտադրական ծախսումներ»

429 «Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Հետաձգված եկամուտների՝ որպես եկամուտ ճանաչում	611 «Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ» 614 «Գործառնական այլ եկամուտներ»
2. Գործառնական վարձակալության գծով և այլ պարտավորությունների հաշվեգրած ոչ ընթացիկ պարտավորությունների փոխանցումը ընթացիկ պարտավորություններին	531 «Այլ ընթացիկ պարտավորություններ»

ԴԱՍ 5 «ԸՆԹԱՑԻԿ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

Այս դասի հաշիվները, բացառությամբ կարգավորող հաշիվների, պասիվային են և նախատեսված են ընթացիկ պարտավորությունների առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: 5-րդ՝ «Ընթացիկ պարտավորություններ» դասն իր մեջ ներառում է հետևյալ խմբերը՝ 51 «Ստացված կարճաժամկետ փոխառություններ և վարկեր, հեջավորման գործիքներ», 52-53 «Գործառնական և այլ ընթացիկ կրեդիտորական պարտքեր» և 54 «Այլ ընթացիկ պարտավորություններ»:

Պարտավորությունների՝ ընթացիկին վերագրման մոտեցումները նկարագրված են «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» ՀՀՄՍ 1-ում:

ԽՈՒՄԲ 51 «ՍՏԱԳՎԱԾ ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՎԱՐԿԵՐ ՀԵՋԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ»

51 «Ստացված կարճաժամկետ փոխառություններ և վարկեր, հեջավորման գործիքներ» խումբն իր մեջ ներառում է հետևյալ առաջին կարգի (սինթետիկ) հաշիվները՝ 511 «Կարճաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարներ», 512 «Երկարաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս», 513 «Կարճաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարներ», 514 «Երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս», 515 «Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս», 516 «Չկրած տոկոսային ծախսեր կարճաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով», 517 «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ընթացիկ ֆինանսական պարտավորություններ» և 518 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ընթացիկ ֆինանսական պարտավորություններ»:

Հաշիվ 511 «Կարճաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարներ»

511 «Կարճաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարներ» հաշիվը նախատեսված է Հայաստանի Հանրապետության և արտերկրի բանկերից կամ վարկային կազմակերպություններից ստացված կարճաժամկետ (հաշվետու ամսաթվի դրությամբ մեկ տարուց պակաս մարման ժամկետ ունեցող) վարկերի գծով վճարվելիք համախառն գումարների (տոկոսների և հիմնական գումարի գծով բոլոր վճարումների անվանական (չգեղջված) արժեքը) առկայության ու շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Ֆինանսական պարտավորությունների ճանաչման և չափման մոտեցումները նկարագրված են «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՍ 39-ում:

Հաշիվը պասիվային է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում է ստացված կարճաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարները, իսկ դեբետում՝ դրանց մարումը: Այս հաշվի մնացորդը կրեդիտային է և իրենից ներկայացնում է կարճաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարները հաշվետու ամսաթվի դրությամբ:

Կարճաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ վարկատուների, մարման ժամկետների, առանձին վարկերի և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

511 «Կարճաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարներ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Վարկերի ստացում դրամական միջոցներով	251 «Դրամարկղ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում»

2. Վարկերի ստացում, որոնք անմիջապես ուղղվում են կրեդիտորական պարտքերի մարմանը կամ դեբիտորական պարտքերի առաջացմանը	224 «Տրված ընթացիկ կանխավճարներ» 229 «Այլ դեբիտորական պարտքեր» 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով»
3. Կարճաժամկետ վարկերի գծով չկրած տոկոսային ծախսերի արտացոլում	516 «Չկրած տոկոսային ծախսեր կարճաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով»
4. Արտարժույթով արտահայտված վճարումների գծով փոխարժեքային տարբերություններից կորստի արտացոլում	725 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից կորուստներ»

511 «Կարճաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարներ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Կարճաժամկետ վարկերի մարում	251 «Դրամարկղ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում»
2. Արտարժույթով արտահայտված վճարումների փոխարժեքային տարբերություններից օգուտի արտացոլում	625 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտներ»

Հաշիվ 512 «Երկարաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս»

512 «Երկարաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս» հաշիվը նախատեսված է երկարաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մասի (երկարաժամկետ վարկերի այն մասը, որի մարման ժամկետը հաշվետու ամսաթվի դրությամբ մեկ տարուց պակաս է) վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվը պասիվային է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում է երկարաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մասը, իսկ դեբետում՝ դրանց մարումը: Այս հաշվի մնացորդը կրեդիտային է և իրենից ներկայացնում է երկարաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մասը հաշվետու ամսաթվի դրությամբ:

Երկարաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մասի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ վարկատուների, մարման ժամկետների, առանձին վարկերի և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

512 «Երկարաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Երկարաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մասի տեղափոխում	411 «Երկարաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարներ»

2. Արտարժույթով արտահայտված վճարումների գծով փոխարժեքային տարբերություններից կորստի արտացոլում	725 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից կորուստներ»
--	--

512 «Երկարաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Երկարաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մասի մարում	251 «Դրամարկղ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում»
2. Երկարաժամկետ վարկերի ժամկետից շուտ մարման արտացոլում (կարճաժամկետ մասի գծով)	
- փաստացի վճարված գումարի չափով	251 «Դրամարկղ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում»
- հաշվեկշռային արժեքի և փաստացի վճարված գումարի բացասական տարբերության չափով	727 «Ֆինանսական ծախսեր»
3. Երկարաժամկետ վարկերի կարճաժամկետ մասի գծով չկրած տոկոսային ծախսերի մնացորդի դուրս գրում	516 «Չկրած տոկոսային ծախսեր կարճաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով»
4. Արտարժույթով արտահայտված վճարումների գծով փոխարժեքային տարբերություններից օգուտի արտացոլում	625 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտներ»

Հաշիվ 513 «Կարճաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարներ»

513 «Կարճաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարներ» հաշիվը նախատեսված է կարճաժամկետ (հաշվետու ամսաթվի դրությամբ մեկ տարուց պակաս մարման ժամկետ ունեցող) փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարների (տոկոսների և հիմնական գումարի գծով բոլոր վճարումների անվանական (չգեղջված) արժեքը) առկայության ու շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվը պասիվային է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում են ստացված կարճաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարները, իսկ դեբետում՝ դրանց մարումը: Այս հաշվի մնացորդը կրեդիտային է և իրենից ներկայացնում է կարճաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարները հաշվետու ամսաթվի դրությամբ:

Կարճաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ փոխատուների, մարման ժամկետների, առանձին փոխառությունների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

513 «Կարճաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարներ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Փոխառությունների ստացում դրամական միջոցներով	251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ»
2. Փոխառությունների ստացում, որոնք անմիջապես ուղղվում են կրեդիտորական պարտքերի մարմանը	521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով»
3. Կարճաժամկետ փոխառությունների գծով չկրած տոկոսային ծախսերի արտացոլում	516 «Չկրած տոկոսային ծախսեր կարճաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով»
4. Արտարժույթով արտահայտված վճարումների գծով փոխարժեքային տարբերություններից կորստի արտացոլում	725 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից կորուստներ»

513 «Կարճաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարներ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Կարճաժամկետ փոխառությունների մարում	251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ»
2. Կանոնադրական կապիտալի հետագա ավելացում՝ պարտավորությունների մարմամբ	311 «Կանոնադրական կապիտալ» 312 «Չվճարված կապիտալ»
3. Արտարժույթով արտահայտված վճարումների գծով փոխարժեքային տարբերություններից օգուտի արտացոլում	625 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտներ»

Հաշիվ 514 «Երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս»

514 «Երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս» հաշիվը նախատեսված է երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մասի (երկարաժամկետ փոխառությունների այն մասը, որի մարման ժամկետը հաշվետու ամսաթվի դրությամբ մեկ տարուց պակաս է) վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվը պասիվային է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում է երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մասը, իսկ դեբետում՝ դրանց մարումը: Այս հաշվի մնացորդը կրեդիտային է և իրենից ներկայացնում է երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մասը հաշվետու ամսաթվի դրությամբ:

514 «Երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 5141 «Տրված երկարաժամկետ մուրհակների գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս», 5142 «Տեղաբաշխված

երկարաժամկետ պարտատոմսերի գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս», 5143 «Այլ երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս»:

Երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մասի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ փոխատուների, փոխառությունների ժամկետների, առանձին փոխառությունների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

514 «Երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մասի տեղափոխում	412 «Երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարներ»
2. Արտարժույթով արտահայտված վճարումների գծով փոխարժեքային տարբերություններից կորստի արտացոլում	725 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից կորուստներ»

514 «Երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս» հաշիվը դեբեյտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մասի մարում	251 «Դրամարկղ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ»
2. Երկարաժամկետ փոխառությունների ժամկետից շուտ մարման արտացոլում (կարճաժամկետ մասի գծով)	
- փաստացի վճարված գումարի չափով	251 «Դրամարկղ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ»
- հաշվեկշռային արժեքի և փաստացի վճարված գումարի բացասական տարբերության չափով	727 «Ֆինանսական ծախսեր»
3. Կանոնադրական կապիտալի հետագա ավելացում՝ պարտավորությունների մարմամբ	311 «Կանոնադրական կապիտալ» 312 «Չվճարված կապիտալ»
4. Երկարաժամկետ փոխառությունների կարճաժամկետ մասի գծով չկրած տոկոսային ծախսերի մնացորդի դուրս գրում	516 «Չկրած տոկոսային ծախսեր կարճաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով»
5. Արտարժույթով արտահայտված վճարումների գծով փոխարժեքային տարբերություններից օգուտի արտացոլում	625 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտներ»

Հաշիվ 515 «Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս»

515 «Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս» հաշիվը նախատեսված է ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մասի առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարների ճանաչման, չափման և գնահատման մոտեցումները նկարագրված են «Վարձակալություն» ՀՀՄՍ 17-ում:

Հաշիվը պասիվային է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում է ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մասը, իսկ դեբետում՝ դրանց մարումը, դուրս գրումը: Այս հաշվի մնացորդը կրեդիտային է և իրենից ներկայացնում է ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մասը հաշվետու ամսաթվի դրությամբ:

Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մասի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ վարձատուների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

515 «Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մասի տեղափոխում	413 «Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարներ»
2. Արտարժույթով արտահայտված վճարումների գծով փոխարժեքային տարբերություններից կորստի արտացոլում	725 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից կորուստներ»

515 «Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մասի մարում	251 «Դրամարկղ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ»
2. Ֆինանսական վարձակալության գծով երկարաժամկետ պարտքերի մարում՝ ժամկետից շուտ (կարճաժամկետ մասի գծով)	
- փաստացի վճարված (վճարվելիք) գումարի չափով	251 «Դրամարկղ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 531 «Այլ ընթացիկ պարտավորություններ»
- հաշվեկշռային արժեքի և փաստացի վճարված գումարի բացասական տարբերության չափով	727 «Ֆինանսական ծախսեր»
3. Ֆինանսական վարձակալության կարճաժամկետ մասի գծով չկրած տոկոսային ծախսերի մնացորդի դուրս գրում	516 «Չկրած տոկոսային ծախսեր կարճաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով»

4. Վարձակալված հիմնական միջոցների վերադարձում վարձատուին	119 «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցներ»
5. Արտարժույթով արտահայտված վճարումների գծով փոխարժեքային տարբերություններից օգուտի արտացոլում	625 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտներ»

Հաշիվ 516 «Չկրած տոկոսային ծախսեր կարճաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով»

516 «Չկրած տոկոսային ծախսեր կարճաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով» հաշիվը նախատեսված է ամորտիզացված արժեքով հաշվառվող կարճաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով չկրած տոկոսային ծախսերի (ամորտիզացված արժեքով հաշվառվող կարճաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով վճարվելիք համախառն գումարների և դրանց զեղչված արժեքի տարբերությունը) վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար, ընդ որում չկրած տոկոսային ծախսերի գումարը որոշելիս գործարքի հետ կապված ծախսումները (բացառությամբ ֆինանսական վարձակալության գծով երկարաժամկետ ֆինանսական պարտավորության գծով գործարքի հետ կապված ծախսումների) գումարվում են: Եթե կարճաժամկետ ֆինանսական պարտավորությունների զեղչման ազդեցությունը էական չէ կամ դրանց ստացումը և մարումը կատարվելու են միևնույն հաշվետու ժամանակաշրջանում, ապա կազմակերպությունները, տոկոսային ծախսը հաշվեգրելիս, կարող են զեղչման ազդեցությունը հաշվի չառնել: Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորությունների գծով չկրած տոկոսային ծախսերի, ինչպես նաև գործարքի հետ կապված ծախսումների որոշման և գնահատման մոտեցումները նկարագրված են «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՍ 39-ում և «Վարձակալություն» ՀՀՄՍ 17-ում:

Հաշիվն ակտիվային է, կարգավորող: Մասնավորապես, դեբետում արտացոլվում է ամորտիզացված արժեքով հաշվառվող կարճաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով չկրած տոկոսային ծախսերը, իսկ կրեդիտում՝ չկրած տոկոսային ծախսերի հաշվեգրումը ծախսերին: Հաշվի մնացորդը դեբետային է և իրենից ներկայացնում է ամորտիզացված արժեքով հաշվառվող կարճաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով չկրած տոկոսային ծախսերի գումարը հաշվետու ամսաթվի դրությամբ: Այն դասի ընդհանուր գումարում ներառվում է բացասական նշանով:

516 «Չկրած տոկոսային ծախսեր կարճաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 5161 «Չկրած տոկոսային ծախսեր կարճաժամկետ վարկերի գծով», 5162 «Չկրած տոկոսային ծախսեր երկարաժամկետ վարկերի կարճաժամկետ մասի գծով», 5163 «Չկրած տոկոսային ծախսեր կարճաժամկետ փոխառությունների գծով», 5164 «Չկրած տոկոսային ծախսեր երկարաժամկետ փոխառությունների կարճաժամկետ մասի գծով», 5165 «Չկրած տոկոսային ծախսեր ֆինանսական վարձակալության կարճաժամկետ մասի գծով»:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող կարճաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով չկրած տոկոսային ծախսերի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ վարկատուների, փոխատուների, վարձատուների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

516 «Չկրած տոկոսային ծախսեր կարճաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Չկրած տոկոսային ծախսերի արտացոլում	511 «Կարճաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարներ» 513 «Կարճաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարներ»

2. Գործարքի հետ կապված ծախսումների արտացոլում	228 «Դեբիտորական պարտքեր առհաշիվ տրված գումարների գծով» 251 «Դրամարկղ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում» 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով»
3. Թողարկված բաղադրյալ պարտքային գործիքում պարունակվող՝ որպես սեփական կապիտալ դասակարգված ածանցյալ գործիքների արտացոլում	352 «Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքներ»
4. Արտոնյալ (անտոկոս կամ շուկայականից ցածր տոկոսով) փոխառությունների արտոնության բաղադրիչը՝ դասակարգված որպես պետական շնորհ	421 «Ակտիվներին վերաբերող շնորհներ»
5. Երկարաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով չկրած տոկոսային ծախսերի վերադասակարգում որպես կարճաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով չկրած տոկոսային ծախսեր	414 «Չկրած տոկոսային ծախսեր երկարաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով»

516 «Չկրած տոկոսային ծախսեր կարճաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Չկրած տոկոսային ծախսերի հաշվեգրում ծախսերին	727 «Ֆինանսական ծախսեր»
2. Չկրած տոկոսային ծախսերի կապիտալացում	118 «Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ» 821 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների կառուցման (ստեղծման) ծախսումներ» 822 «Սարքավորումների տեղակայման ծախսումներ» 823 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումներ» 824 «Ոչ նյութական ակտիվների ներստեղծման ծախսումներ» 826 «Այլ ոչ ընթացիկ ակտիվների ստեղծման ծախսումներ»
3. Ժամկետից շուտ մարված երկարաժամկետ ֆինանսական պարտավորությունների կարճաժամկետ մասի գծով չկրած տոկոսային ծախսերի մնացորդի դուրս գրում	512 «Երկարաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս» 514 «Երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս» 515 «Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս»

Հաշիվ 517 «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ընթացիկ ֆինանսական պարտավորություններ»

517 «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ընթացիկ ֆինանսական պարտավորություններ» հաշիվը նախատեսված է առևտրական նպատակներով պահվող ֆինանսական պարտավորությունների առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Ֆինանսական պարտավորությունների՝ որպես առևտրական նպատակներով պահվող դասակարգման, դրանց ճանաչման և չափման մոտեցումները նկարագրված են «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՍ 39-ում:

Հաշիվը պասիվային է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում է առևտրական նպատակներով պահվող ֆինանսական պարտավորության վերաձված ֆինանսական ակտիվների արժեքը, «Կարճ վաճառքի» իրականացման դեպքում վաճառված արժեթղթերը առաքելու պարտավորությունը, դրանց՝ իրական արժեքով վերաչափումից արժեքի աճը, իսկ դեբետում՝ մարված առևտրական նպատակներով պահվող ֆինանսական պարտավորությունների արժեքը, դրանց՝ իրական արժեքով վերաչափումից արժեքի նվազումը: Այս հաշվի մնացորդը կրեդիտային է և իրենից ներկայացնում է առևտրական նպատակներով պահվող ֆինանսական պարտավորությունների արժեքը հաշվետու ամսաթվի դրությամբ:

Առևտրական նպատակներով պահվող ֆինանսական պարտավորություններ վերլուծական հաշվառումը տարվում է ըստ առևտրական նպատակներով պահվող ֆինանսական պարտավորությունների տեսակների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

517 «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ընթացիկ ֆինանսական պարտավորություններ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Առևտրական նպատակներով պահվող ածանցյալ ֆինանսական ակտիվների վերաձվելը ֆինանսական պարտավորությունների՝ հաշվետու ամսաթվի դրությամբ (իրական արժեքով վերաչափումից առաջացած կրեդիտային մնացորդի չափով)	231 «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ընթացիկ ֆինանսական ակտիվներ»
2. Առևտրական նպատակներով պահվող ածանցյալ ֆինանսական պարտավորությունների վերաձվելը ֆինանսական ակտիվների՝ հաշվետու ամսաթվի դրությամբ (իրական արժեքով վերաչափումից առաջացած դեբետային մնացորդի չափով)	231 «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ընթացիկ ֆինանսական ակտիվներ»
3. «Կարճ վաճառքի» արտացոլում (երբ կազմակերպությունը վաճառում է դեռևս իր տնօրինության տակ չգտնվող արժեթղթեր)	722 «Ընթացիկ ֆինանսական ակտիվների օտարումից ծախսեր»
4. Առևտրական նպատակներով պահվող ֆինանսական պարտավորությունների՝ իրական արժեքով վերաչափումից արժեքի աճ	726 «Ոչ գործառնական ֆինանսական գործիքների վերաչափումից և արժեզրկումից (անհավաքագրելիությունից) կորուստներ»
5. Արտարժույթով արտահայտված վճարումների գծով փոխարժեքային տարբերություններից կորստի արտացոլում	725 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից կորուստներ»

517 «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ընթացիկ ֆինանսական պարտավորություններ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Առևտրական նպատակներով պահվող ֆինանսական պարտավորությունների մարում	251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ»

2. Առևտրական նպատակներով պահվող ֆինանսական պարտավորությունների՝ իրական արժեքով վերաչափումից արժեքի նվազում	626 «Ոչ գործառնական ֆինանսական գործիքների վերաչափումից և արժեզրկման (անհավաքագրելիության) հակադարձումից օգուտներ»
3. Արտարժույթով արտահայտված վճարումների գծով փոխարժեքային տարբերություններից օգուտի արտացոլում	625 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտներ»

Հաշիվ 518 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ընթացիկ ֆինանսական պարտավորություններ»

518 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ընթացիկ ֆինանսական պարտավորություններ» հաշիվը նախատեսված է որպես հեջավորման գործիք նախատեսված ընթացիկ ֆինանսական պարտավորությունների առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Որպես հեջավորման գործիք նախատեսված ֆինանսական պարտավորությունների ճանաչման և չափման մոտեցումները նկարագրված են «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՍ 39-ում:

Հաշիվը պասիվային է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում է որպես հեջավորման գործիք նախատեսված և ընթացիկ ֆինանսական պարտավորության վերածված ֆինանսական ակտիվների արժեքը, իրական արժեքով վերաչափումից արժեքի աճը, իսկ դեբետում մարված որպես հեջավորման գործիք նախատեսված ընթացիկ ֆինանսական պարտավորությունների արժեքը, իրական արժեքով վերաչափումից արժեքի նվազումը: Այս հաշվի մնացորդը կրեդիտային է և իրենից ներկայացնում է որպես հեջավորման գործիք նախատեսված ընթացիկ ֆինանսական պարտավորությունների արժեքը հաշվետու ամսաթվի դրությամբ:

Որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական պարտավորությունների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ հեջավորման գործիքների տեսակների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

518 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ընթացիկ ֆինանսական պարտավորություններ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տեստեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Որպես հեջավորման գործիք նախատեսված ընթացիկ ֆինանսական ակտիվների վերածվելը ընթացիկ ֆինանսական պարտավորությունների՝ հաշվետու ամսաթվի դրությամբ (իրական արժեքով վերաչափումից առաջացած կրեդիտային մնացորդի չափով)	239 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ընթացիկ ֆինանսական ակտիվներ»
2. Որպես հեջավորման գործիք նախատեսված ընթացիկ ֆինանսական պարտավորությունների վերածվելը ընթացիկ ֆինանսական ակտիվների՝ հաշվետու ամսաթվի դրությամբ (իրական արժեքով վերաչափումից առաջացած դեբետային մնացորդի չափով)	239 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ընթացիկ ֆինանսական ակտիվներ»
3. Որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական պարտավորությունների վերադասակարգում որպես ընթացիկ ֆինանսական պարտավորություններ	415 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական պարտավորություններ»
4. Որպես հեջավորման գործիք նախատեսված ընթացիկ ֆինանսական պարտավորությունների՝ իրական արժեքով վերաչափումից արժեքի աճ՝	

ա) երբ ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում (դրամական հոսքերի արդյունավետ հեջում)	773 «Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից կորուստներ»
բ) երբ ճանաչվում է շահույթում կամ վնասում (իրական արժեքի հեջում, ինչպես նաև դրամական հոսքերի ոչ արդյունավետ հեջում)	726 «Ոչ գործառնական ֆինանսական գործիքների վերաչափումից և արժեզրկումից (անհավաքագրելիությունից) կորուստներ»
5. Արտարժույթով արտահայտված վճարումների գծով փոխարժեքային տարբերություններից կորստի արտացոլում	725 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից կորուստներ»

**518 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ընթացիկ ֆինանսական պարտավորություններ»
հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետք**

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Որպես հեջավորման գործիք նախատեսված ընթացիկ ֆինանսական պարտավորությունների մարում	251 «Դրամարկղ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ»
2. Որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական պարտավորությունների՝ իրական արժեքով վերաչափումից արժեքի նվազում՝	
ա) երբ ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում (դրամական հոսքերի արդյունավետ հեջում)	673 «Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից օգուտներ»
բ) երբ ճանաչվում է շահույթում կամ վնասում (իրական արժեքի հեջում, ինչպես նաև դրամական հոսքերի ոչ արդյունավետ հեջում)	626 «Ոչ գործառնական ֆինանսական գործիքների վերաչափումից և արժեզրկման (անհավաքագրելիության) հակադարձումից օգուտներ»
3. Արտարժույթով արտահայտված վճարումների գծով փոխարժեքային տարբերություններից օգուտի արտացոլում	625 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտներ»

ԽՈՒՄԲ 52-53 «ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԸՆԹԱՑԻԿ ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ»

52-53 «Գործառնական և այլ ընթացիկ կրեդիտորական պարտքեր» խումբն իր մեջ ներառում է հետևյալ առաջին կարգի (սինթետիկ) հաշիվները՝ 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով», 523 «Ստացված կանխավճարներ», 524 «Պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով», 525 «Պարտքեր պարտադիր սոցիալական ապահովության գծով», 527 «Պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով», 528 «Պարտքեր աշխատակիցներին այլ գործառնությունների գծով», 529 «Պարտքեր շահաբաժինների գծով» և 531 «Այլ ընթացիկ պարտավորություններ»:

Հաշիվ 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով»

521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով» հաշիվը նախատեսված է հումքի, նյութերի, ապրանքների, ծառայությունների, աշխատանքների, ֆինանսական ակտիվների, հիմնական միջոցների և այլ

ակտիվների գնումների գծով կրեդիտորական պարտքերի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվը պասիվային է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում է վերը նշված գործառնություններից առաջացող կրեդիտորական պարտքերի գումարը, իսկ դեբետում՝ այդ պարտքերի մարումները, դուրս գրումները: Այս հաշվի մնացորդը կրեդիտային է և իրենից ներկայացնում է գնումների գծով կրեդիտորական պարտքերի գումարը հաշվետու ամսաթվի դրությամբ:

521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 5211 «Կրեդիտորական պարտքեր ստացված հումքի, նյութերի գծով», 5212 «Կրեդիտորական պարտքեր ապրանքների գնումների գծով», 5213 «Կրեդիտորական պարտքեր ստացված ծառայությունների, ընդունված աշխատանքների գծով», 5214 «Կրեդիտորական պարտքեր ստացված ֆինանսական ակտիվների գծով», 5215 «Կրեդիտորական պարտքեր ստացված հիմնական միջոցների գծով», 5216 «Կրեդիտորական պարտքեր այլ գնումների գծով»:

Գնումների գծով կրեդիտորական պարտքերի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ կրեդիտորների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Ձեռք բերված ակտիվների, ստացված ծառայությունների, ընդունված աշխատանքների գծով պարտքերի արտացոլում՝	
- առանց անուղղակի հարկերի	111 «Մաշվող հիմնական միջոցներ» 115 «Հողամասեր» 116 «Կենսաբանական ակտիվներ» 118 «Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ» 119 «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցներ» 122 «Ներդրումային գույք» 131 «Ոչ նյութական ակտիվներ» 141 «Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ չկապակցված կազմակերպություններում» 142 «Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ կապակցված կազմակերպությունների կանոնադրական կապիտալում» 143 «Իրական արժեքով չափվող ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 144 «Մինչև մարման ժամկետը պահվող երկարաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքեր» 147 «Չվաստակած ֆինանսական եկամուտ ամորտիզացված արժեքով հաշվառվող երկարաժամկետ ֆինանսական ակտիվների գծով» 148 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 211 «Նյութեր» 212 «Սպառվող կենսաբանական ակտիվներ» 216 «Ապրանքներ»

	<p>231 «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ընթացիկ ֆինանսական ակտիվներ»</p> <p>232 «Վաճառքի համար մատչելի ընթացիկ ֆինանսական ակտիվներ»</p> <p>233 «Մինչև մարման ժամկետը պահվող կարճաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքեր»</p> <p>238 «Չվաստակած ֆինանսական եկամուտ ամորտիզացված արժեքով հաշվառվող կարճաժամկետ ֆինանսական ակտիվների գծով»</p> <p>239 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ընթացիկ ֆինանսական ակտիվներ»</p> <p>256 «Դրամական փաստաթղթեր»</p> <p>414 «Չկրած տոկոսային ծախսեր երկարաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով»</p> <p>516 «Չկրած տոկոսային ծախսեր կարճաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով»</p> <p>543 «Ընթացիկ պահուստներ»</p> <p>712 «Իրացման ծախսեր»</p> <p>713 «Վարչական ծախսեր»</p> <p>714 «Գործառնական այլ ծախսեր»</p> <p>721 «Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից ծախսեր»</p> <p>722 «Ընթացիկ ֆինանսական ակտիվների օտարումից ծախսեր»</p> <p>731 «Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք՝ ընդհատված գործունեությունից»</p> <p>732 «Ընդհատված գործունեությունը կազմող ակտիվների կամ օտարման խմբերի օտարումից և (կամ) վերաչափումից ծախսեր»</p> <p>811 «Հիմնական արտադրություն»</p> <p>812 «Օժանդակ արտադրություն»</p> <p>813 «Անուղղակի արտադրական ծախսումներ»</p> <p>814 «Խոտան և դրա շտկման ծախսումներ»</p> <p>821 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների կառուցման (ստեղծման) ծախսումներ»</p> <p>822 «Սարքավորումների տեղակայման ծախսումներ»</p> <p>823 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումներ»</p> <p>824 «Ոչ նյութական ակտիվների ներստեղծման ծախսումներ»</p> <p>825 «Ոչ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումներ»</p> <p>826 «Այլ ոչ ընթացիկ ակտիվների ստեղծման ծախսումներ»</p>
անուղղակի հարկեր	<p>226 «Հաշվանցման (փոխհատուցման) ենթակա անուղղակի հարկեր»</p> <p>261 «Ընթացիկ ակտիվներ հաշվանցումը հետաձգված անուղղակի հարկերի գծով»</p>
2. Բողոքարկումների գծով դեբիտորական պարտքերի արտացոլում	229 «Այլ դեբիտորական պարտքեր»
3. Տրամադրված բնակարանային կոմունալ ծառայությունների դիմաց անձնակազմի դեբիտորական պարտքերի արտացոլում	229 «Այլ դեբիտորական պարտքեր»

4. Արտարժույթով արտահայտված կրեդիտորական պարտքերի փոխարժեքային տարբերությունից՝ կորստի արտացոլում	725 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից կորուստներ»
---	--

521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Գնումների գծով կրեդիտորական պարտքերի մարում՝	
ա) դրամական միջոցներով	251 «Դրամարկղ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում»
բ) վարկերով և փոխառություններով	411 «Երկարաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարներ» 412 «Երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարներ» 511 «Կարճաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարներ» 513 «Կարճաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարներ»
գ) փոխադարձ պարտավորությունների հաշվանցմամբ	152 «Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվներ ձեռք բերելու համար» 221 «Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով» 224 «Տրված ընթացիկ կանխավճարներ»
2. Գնումների գծով կրեդիտորական պարտքերի զիջում	614 «Գործառնական այլ եկամուտներ»
3. Կանոնադրական կապիտալի հետագա ավելացում՝ պարտավորությունների մարմամբ	311 «Կանոնադրական կապիտալ» 312 «Զվճարված կապիտալ»
4. Ֆիզիկական անձ մատակարարներից պահվող եկամտահարկի կամ ոչ ռեզիդենտ մատակարարներից պահվող շահութահարկի գումարների արտացոլում	542 «Վճարումը հետաձգված հարկային պարտավորություններ»
5. Բողոքարկումների գծով դեբիտորական պարտքի մարում	229 «Այլ դեբիտորական պարտքեր»
6. Արտարժույթով արտահայտված վճարումների գծով փոխարժեքային տարբերություններից՝ օգուտի արտացոլում	625 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտներ»

Հաշիվ 523 «Ստացված կանխավճարներ»

523 «Ստացված կանխավճարներ» հաշիվը նախատեսված է գնորդներից և պատվիրատուներից արտադրանքի, ապրանքների, այլ ակտիվների մատակարարման, ինչպես նաև աշխատանքների, ծառայությունների մատուցման և գործառնական վարձակալության համար ստացված կանխավճարների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվը պասիվային է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում է վերը նշված գործառնությունների համար ստացված կանխավճարների գումարը, իսկ դեբետում՝ դրանց մարումը կամ դուրս գրումը: Այս հաշվի

մնացորդը կրեդիտային է և իրենից ներկայացնում է ստացված կանխավճարների գումարը հաշվետու ամսաթվի դրությամբ:

523 «Ստացված կանխավճարներ» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 5231 «Ստացված կանխավճարներ վաճառվելիք արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների գծով», 5232 «Ստացված կանխավճարներ վաճառվելիք ոչ ընթացիկ ակտիվների գծով», 5233 «Ստացված կանխավճարներ գործառնական վարձակալության գծով», 5234 «Այլ նպատակներով ստացված կանխավճարներ»:

Ստացված ընթացիկ կանխավճարների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ կրեդիտորների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

523 «Ստացված կանխավճարներ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
Ստացված կանխավճարների արտացոլում	251 «Դրամարկը» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ»

523 «Ստացված կանխավճարներ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Ստացված կանխավճարների մարում վաճառված ակտիվներով (ոչ իրական արժեքով չափվող), մատուցված ծառայություններով՝	
- առանց անուղղակի հարկերի	611 «Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ» 614 «Գործառնական այլ եկամուտներ» 615 «Գյուղատնտեսական գործունեությունից եկամուտ» 621 «Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից եկամուտներ» 622 «Ընթացիկ ֆինանսական ակտիվների օտարումից եկամուտներ» 631 «Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ՝ ընդհատված գործունեությունից» 632 «Ընդհատված գործունեությունը կազմող ակտիվների կամ օտարման խմբերի օտարումից և (կամ) վերաչափումից եկամուտներ»
- անուղղակի հարկեր	524 «Պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով»
2. Ստացված կանխավճարների մարում իրական արժեքով չափվող ակտիվների տրամադրմամբ (օտարմամբ)	
- առանց անուղղակի հարկերի	116 «Կենսաբանական ակտիվներ» 122 «Ներդրումային գույք» 212 «Սպառվող կենսաբանական ակտիվներ» 231 «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 232 «Վաճառքի համար մատչելի ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 143 «Իրական արժեքով չափվող ոչ ընթացիկ

	Ֆինանսական ակտիվներ»
- անուղղակի հարկեր	524 «Պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով»
3. Ստացված կանխավճարների հաշվին ընթացիկ դեբիտորական պարտքերի հաշվանցում	221 «Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով»
4. Ստացված ընթացիկ կանխավճարների հետ վերադարձ	251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ»

Հաշիվ 524 «Պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով»

524 «Պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով» հաշիվը նախատեսված է հարկերի, տուրքերի, բյուջե վճարվող այլ պարտադիր վճարների, ինչպես նաև դրանց գծով տույժերի, տուգանքների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվը պասիվային է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում է բյուջեի նկատմամբ առաջացած կարճաժամկետ պարտավորությունների գումարը, իսկ դեբետում՝ այդ պարտավորությունների մարումը, ինչպես նաև անուղղակի հարկերի գծով հաշվանցվող գումարները: Այս հաշվի մնացորդը կրեդիտային է և իրենից ներկայացնում է բյուջեին ունեցած կրեդիտորական պարտքը հաշվետու ամսաթվի դրությամբ: Դեբետային մնացորդի առաջացման դեպքում այն ձևակերպվում է որպես բյուջեի գծով դեբիտորական պարտք:

524 «Պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 5241 «Պարտքեր շահութահարկի գծով», 5242 «Պարտքեր եկամտահարկի գծով», 5243 «Պարտքեր ավելացված արժեքի հարկի գծով», 5244 «Պարտքեր ակցիզային հարկի գծով», 5245 «Պարտքեր գույքահարկի գծով», 5246 «Պարտքեր հողի հարկի գծով», 5247 «Պարտքեր մաքսատուրքի գծով», 5248 «Պարտքեր հարկերի դիմաց հաշվարկված տույժերի, տուգանքների գծով», 5249 «Պարտքեր այլ պարտադիր վճարների գծով»:

524 «Պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Բյուջեի գծով ընթացիկ պարտավորությունների արտացոլում՝	
ա) շահութահարկի գծով	
- երբ հարկի վճարումը չի հետաձգվել	751 «Շահութահարկի գծով ծախս (եկամուտ)»
- երբ իրացման դիմաց վճարումը ստացվել է (երբ հարկի վճարման ժամկետը հետաձգվել էր մինչև իրացման դիմաց վճարի ստացումը)	542 «Վճարումն հետաձգված հարկային պարտավորություններ հետաձգված հարկերի գծով»
բ) եկամտահարկի գծով՝	
- աշխատավարձից	527 «Պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով»
- այլ տիպի գործառնություններից	211 «Նյութեր» 216 «Ապրանքներ»
գ) ավելացված արժեքի հարկի գծով՝	
- երբ հարկի վճարումը չի հետաձգվել	221 «Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով»

	222 «Դեբիտորական պարտքեր այլ եկամուտների գծով» 251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 523 «Ստացված կանխավճարներ»
- երբ իրացման դիմաց վճարումը ստացվել է (այն պարանքների և ծառայությունների համար, որոնց ԱԱՀ-ի պարտավորության ծագման պահիլ որոշվում է դրանց դիմաց վճարման պահով)	542 «Վճարումն հետաձգված հարկային պարտավորություններ»
դ) ակցիզային հարկի գծով	221 «Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով» 251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ»
ե) հողի հարկի և գույքահարկի գծով	713 «Վարչական ծախսեր»
զ) մաքսատուրքի գծով	111 «Մաշվող հիմնական միջոցներ» 118 «Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ» 211 «Նյութեր» 212 «Սպառվող կենսաբանական ակտիվներ» 216 «Ապրանքներ»
է) հաստատագրված վճարի գծով	713 «Վարչական ծախսեր»
ը) այլ պարտադիր վճարների գծով	713 «Վարչական ծախսեր» 811 «Հիմնական արտադրություն» 812 «Օժանդակ արտադրություն» 813 «Անուղղակի արտադրական ծախսումներ» 814 «Խոտան և դրա շտկման ծախսումներ» 821 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների կառուցման (ստեղծման) ծախսումներ» 822 «Սարքավորումների տեղակայման ծախսումներ» 823 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումներ» 824 «Ոչ նյութական ակտիվների ներստեղծման ծախսումներ» 825 «Ոչ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումներ» 826 «Այլ ոչ ընթացիկ ակտիվների ստեղծման ծախսումներ»
2. Հարկային նպատակներով կրեդիտորական պարտքերի դուրս գրումից՝ նախկինում հաշվանցված ԱԱՀ-ի որպես պարտավորություն ձևակերպում	714 «Գործառնական այլ ծախսեր»
3. Հարկերի գծով հաշվարկված տույժերի և տուգանքների հաշվեգրում	714 «Գործառնական այլ ծախսեր»
4. Ակտիվների (աշխատանքների, ծառայությունների) փոխանակման դեպքում ԱԱՀ գումարների հաշվանցում	226 «Հաշվանցման (փոխհատուցման) ենթակա անուղղակի հարկեր»
5. Հաշվետու ժամանակաշրջանի վերջում բյուջեի գերավճարի վերադասակարգում	225 «Դեբիտորական պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով»
6. Ակտիվների անհատույց տրամադրումից առաջացած ավելացված արժեքի հարկ	728 «Անհատույց տրված ակտիվների գծով ծախսեր»

524 «Պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Վճարումներ բյուջեին կարճաժամկետ պարտավորությունների դիմաց	252 «Հաշվարկային հաշիվ»
2. Հաշվանցվող ԱԱՀ-ի գումարների արտացոլում	226 «Հաշվանցման (փոխհատուցման) ենթակա անուղղակի հարկեր»
3. Հաշվանցվող ակցիզային հարկի գումարների արտացոլում	261 «Ընթացիկ ակտիվներ հաշվանցումն հետաձգված անուղղակի հարկերի գծով»
4. Կանխավճարների հաշվին ընթացիկ պարտավորությունների մարում	225 «Դեբիտորական պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով»

Հաշիվ 525 «Պարտքեր պարտադիր սոցիալական ապահովության գծով»

525 «Պարտքեր պարտադիր սոցիալական ապահովության գծով» հաշիվը նախատեսված է պարտադիր սոցիալական ապահովության վճարների (ինչպես աշխատավարձից պահվող, այնպես էլ գործատուի կողմից վճարվող), ինչպես նաև դրանց գծով տույժերի, տուգանքների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվը պասիվային է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում է պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով առաջացած կարճաժամկետ կրեդիտորական պարտքերի գումարը, իսկ դեբետում՝ այդ պարտքերի մարումը, ինչպես նաև աշխատակիցներին վճարված կամ վճարման ենթակա անաշխատունակության և այլ սոցիալական նպաստները: Այս հաշվի մնացորդը կրեդիտային է և իրենից ներկայացնում է պարտադիր սոցիալական ապահովության գծով կրեդիտորական պարտքը հաշվետու ամսաթվի դրությամբ: Դեբետային մնացորդի առաջացման դեպքում այն ձևակերպվում է որպես դեբիտորական պարտք:

525 «Պարտքեր պարտադիր սոցիալական ապահովության գծով» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 5251 «Պարտքեր պարտադիր սոցիալական ապահովության գծով՝ աշխատակիցների հաշվին», 5252 «Պարտքեր պարտադիր սոցիալական ապահովության գծով՝ գործատուների հաշվին», 5253 «Պարտավորություններ՝ փոխհատուցելի բացակայությունների գծով հաշվեգրվելիք պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով»:

Այս հաշվի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ աշխատակիցների, ստորաբաժանումների, ծախսային ուղղությունների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

525 «Պարտքեր պարտադիր սոցիալական ապահովության գծով» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցների նկատմամբ հաշվարկված սոցիալական ապահովության վճարների արտացոլում ըստ նշանակության	211 «Նյութեր» 212 «Սպառվող կենսաբանական ակտիվներ» 216 «Ապրանքներ» 543 «Ընթացիկ պահուստներ» 712 «Իրացման ծախսեր» 713 «Վարչական ծախսեր» 721 «Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից ծախսեր»

	722 «Ընթացիկ ֆինանսական ակտիվների օտարումից ծախսերի արտացոլում» 811 «Հիմնական արտադրություն» 812 «Օժանդակ արտադրություն» 813 «Անուղղակի արտադրական ծախսումներ» 814 «Խոտան և դրա շտկման ծախսումներ» 821 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների կառուցման (ստեղծման) ծախսումներ» 822 «Սարքավորումների տեղակայման ծախսումներ» 823 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումներ» 824 «Ոչ նյութական ակտիվների ներստեղծման ծախսումներ» 825 «Ոչ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումներ» 826 «Այլ ոչ ընթացիկ ակտիվների ստեղծման ծախսումներ»
2. Աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներից պահված սոցիալական ապահովության վճարների գծով պարտքի արտացոլում	527 «Պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով»
3. Պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով հաշվարկված տույժերի, տուգանքների արտացոլում	714 «Գործառնական այլ ծախսեր»
4. Հաշվետու ժամանակաշրջանի վերջում գերավճարի տեղափոխում	227 «Դեբիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովության գծով»

525 «Պարտքեր պարտադիր սոցիալական ապահովության գծով» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Սոցիալական ապահովության գծով կարճաժամկետ պարտքերի մարում	252 «Հաշվարկային հաշիվ»
2. Աշխատակիցներին վճարված կամ վճարման ենթակա անաշխատունակության կամ այլ սոցիալական նպաստների արտացոլում	527 «Պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով»
3. Գերավճարի հաշվին սոցիալական ապահովության վճարների գծով պարտքի մարում	227 «Դեբիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովության գծով»

Հաշիվ 527 «Պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով»

527 «Պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով» հաշիվը նախատեսված է կազմակերպության աշխատակիցներին աշխատավարձի և այլ կարճաժամկետ հատուցումների, օրինակ՝ փոխհատուցելի բացակայությունների (արձակուրդ, ժամանակավոր անաշխատունակություն և այլն) դիմաց հատուցումներ, պարգևավճարների գծով հատուցումներ, աշխատակիցների բուժսպասարկում, բնակարանով և ավտոմեքենայով ապահովում, անվճար կամ մասնակի վճարումով ապրանքներ կամ ծառայություններ և այլն) գծով կրեդիտորական պարտքերի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվը պասիվային է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում է աշխատակիցներին աշխատավարձի և այլ կարճաժամկետ հատուցումների գծով առաջացած կրեդիտորական պարտքերի գումարը, իսկ դեբետում՝ այդ պարտքերի մարումը: Այս հաշվի մնացորդը կրեդիտային է և իրենից ներկայացնում է աշխատակիցներին աշխատավարձի և այլ կարճաժամկետ հատուցումների գծով կրեդիտորական պարտքերը հաշվետու ամսաթվի դրությամբ: Դեբետային մնացորդի առաջացման դեպքում այն ձևակերպվում է որպես դեբիտորական պարտք:

527 «Պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 5271 «Պարտքեր աշխատավարձի վճարման գծով», 5272 «Պարտքեր փոխհատուցելի բացակայությունների գծով», 5273 «Պարտքեր պարգևավճարների գծով, 5274 «Պարտքեր ավանդագրված հատուցումների գծով»:

Այս հաշվի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ աշխատակիցների, ստորաբաժանումների, ծախսային ուղղությունների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

527 «Պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցների արտացոլում ըստ նշանակության	211 «Նյութեր» 212 «Սպառվող կենսաբանական ակտիվներ» 216 «Ապրանքներ» 543 «Ընթացիկ պահուստներ» 712 «Իրացման ծախսեր» 713 «Վարչական ծախսեր» 721 «Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից ծախսեր» 722 «Ընթացիկ ֆինանսական ակտիվների օտարումից ծախսերի արտացոլում» 811 «Հիմնական արտադրություն» 812 «Օժանդակ արտադրություն» 813 «Անուղղակի արտադրական ծախսումներ» 814 «Խոտան և դրա շտկման ծախսումներ» 821 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների կառուցման (ստեղծման) ծախսումներ» 822 «Սարքավորումների տեղակայման ծախսումներ» 823 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումներ» 824 «Ոչ նյութական ակտիվների ներստեղծման ծախսումներ» 825 «Ոչ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումներ» 826 «Այլ ոչ ընթացիկ ակտիվների ստեղծման ծախսումներ»
2. Հաշվետու ժամանակաշրջանի վերջում գերավճարի տեղափոխում	229 «Այլ դեբիտորական պարտքեր»

527 «Պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Աշխատավարձի վճարում	

ա) դրամական միջոցներով	251 «Դրամարկղ» 252 «Հաշվարկային հաշիվ»
բ) բնամթերքով	611 «Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ» 614 «Գործառնական այլ եկամուտներ»
2. Աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներից հատկացումներ՝	
ա) եկամտահարկի գծով	524 «Պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով»
բ) սոցիալական ապահովության գծով	525 «Պարտքեր պարտադիր սոցիալական ապահովության գծով»
գ) կատարողական թերթիկներով	531 «Այլ ընթացիկ պարտավորություններ»
դ) աշխատակիցների՝ ապառիկ գնված ապրանքների, փոխառությունների գծով կազմակերպության նկատմամբ ունեցած պարտքերի մարման համար	229 «Այլ դեբիտորական պարտքեր»
ե) աշխատակիցների կողմից կազմակերպությունից ձեռք բերված ապրանքների և ծառայությունների դիմաց դեբիտորական պարտքերի մարման համար	221 «Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով»
զ) նյութական վնասի փոխհատուցման համար	222 «Դեբիտորական պարտքեր այլ եկամուտների գծով»
3. Կանխավճար աշխատավարձի հաշվին	251 «Դրամարկղ» 252 «Հաշվարկային հաշիվ»

Հաշիվ 528 «Պարտքեր աշխատակիցներին այլ գործառնությունների գծով»

528 «Պարտքեր աշխատակիցներին այլ գործառնությունների գծով» հաշիվը նախատեսված է կազմակերպության աշխատակիցներին այլ գործառնությունների գծով կրեդիտորական պարտքերի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվը պասիվային է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում է առհաշիվ անձանց գծով, ինչպես նաև աշխատակիցներին այլ գործառնությունների գծով կրեդիտորական պարտքերի գումարը, իսկ դեբետում՝ այդ պարտքերի մարումը, վերաձևակերպումը: Այս հաշվի մնացորդը կրեդիտային է և իրենից ներկայացնում է աշխատակիցներին այլ գործառնությունների գծով կրեդիտորական պարտքը հաշվետու ամսաթվի դրությամբ:

528 «Պարտքեր աշխատակիցներին այլ գործառնությունների գծով» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 5281 «Պարտքեր աշխատակիցներին առհաշիվ գումարների գծով», 5282 «Պարտքեր աշխատակիցներին այլ գործառնությունների գծով»:

Այս հաշվի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ աշխատակիցների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

528 «Պարտքեր աշխատակիցներին այլ գործառնությունների գծով» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
Հաշվետու ժամանակաշրջանի վերջում յուրաքանչյուր աշխատողի՝ առհաշիվ գործառնությունների գծով կրեդիտային մնացորդի ձևակերպումը որպես ընթացիկ կրեդիտորական պարտք	228 «Դեբիտորական պարտքեր առհաշիվ տրված գումարների գծով»

528 «Պարտքեր աշխատակիցներին այլ գործառնությունների գծով» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
Հաշվետու ժամանակաշրջանի սկզբում յուրաքանչյուր աշխատողի՝ առհաշիվ գործառնությունների գծով կրեդիտային մնացորդի վերաձևակերպում	228 «Դեբիտորական պարտքեր առհաշիվ տրված գումարների գծով»

Հաշիվ 529 «Պարտքեր շահաբաժինների գծով»

529 «Պարտքեր շահաբաժինների գծով» հաշիվը նախատեսված է կազմակերպության մասնակիցների (բաժնետերերի) հետ կանոնադրական կապիտալում մասնակցության դիմաց ստացվող եկամուտների (շահաբաժինների) գծով կարճաժամկետ կրեդիտորական պարտքերի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվը պասիվային է, կրեդիտում արտացոլվում է հայտարարված շահաբաժինների (այդ թվում միջանկյալ) գումարը, իսկ դեբետում՝ այդ պարտքերի մարումը: Այս հաշվի մնացորդը կրեդիտային է և իրենից ներկայացնում է հայտարարված և չվճարված շահաբաժինների գումարը հաշվետու ամսաթվի դրությամբ:

Այս հաշվի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ մասնակիցների (բաժնետերերի) և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

529 «Պարտքեր շահաբաժինների գծով» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
Հայտարարված շահաբաժինների գումարների արտացոլում	
ա) հաշվետու տարվա արդյունքներով	342 «Նախորդ տարիների չբաշխված շահույթ (չձեռնարկված վնաս)» 351 «Պահուստային կապիտալ»
բ) միջանկյալ շահաբաժիններ գծով	344 «Միջանկյալ շահաբաժիններ»

529 «Պարտքեր շահաբաժինների գծով» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Շահաբաժինների վճարում	251 «Դրամարկղ»

	252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ»
2. Կազմակերպության բաժնետոմսերով շահաբաժինների վճարում	311 «Կանոնադրական (կապիտալ)» 312 «Չվճարված կապիտալ»

Հաշիվ 531 «Այլ ընթացիկ պարտավորություններ»

531 «Այլ ընթացիկ պարտավորություններ» հաշիվը նախատեսված է կազմակերպության այլ ընթացիկ պարտավորությունների, մասնավորապես, գործառնական վարձակալության, տույժերի և տուգանքների (բացառությամբ հարկերի, պարտադիր սոցիալական ապահովության վճարների և այլ պարտադիր վճարների գծով հաշվարկված տույժերի և տուգանքների), ապահովագրավճարների գծով ընթացիկ պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվը պասիվային է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում է հաշվեգրված պարտավորությունների գումարը, իսկ դեբետում՝ այդ պարտավորությունների մարումը: Այս հաշվի մնացորդը կրեդիտային է և իրենից ներկայացնում է այլ ընթացիկ պարտավորությունների գումարը հաշվետու ամսաթվի դրությամբ:

531 «Այլ ընթացիկ պարտավորություններ» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 5321 «Պարտքեր գործառնական վարձակալության գծով», 5312 «Պարտքեր տույժերի, տուգանքների գծով», 5313 «Պարտքեր ապահովագրավճարների գծով»:

Այլ ընթացիկ պարտավորությունների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ կրեդիտորների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

531 «Այլ ընթացիկ պարտավորություններ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Այլ ընթացիկ պարտավորությունների հաշվեգրում՝	
ա) գործառնական վարձակալության գծով	
- առանց ԱԱՀ-ի	543 «Ընթացիկ պահուստներ» 712 «Իրացման ծախսեր» 713 «Վարչական ծախսեր» 813 «Անուղղակի արտադրական ծախսումներ» 821 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների կառուցման (ստեղծման) ծախսումներ» 822 «Սարքավորումների տեղակայման ծախսումներ» 823 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումներ» 824 «Ոչ նյութական ակտիվների ներստեղծման ծախսումներ» 825 «Ոչ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումներ» 826 «Այլ ոչ ընթացիկ ակտիվների ստեղծման ծախսումներ»
- ԱԱՀ	226 «Հաշվանցման (փոխհատուցման) ենթակա անուղղակի հարկեր» 261 «Ընթացիկ ակտիվներ հաշվանցումն հետաձգված անուղղակի հարկերի գծով»
բ) ապահովագրավճարների գծով	111 «Մաշվող հիմնական միջոցներ» 211 «Նյութեր» 212 «Սպառվող կենսաբանական ակտիվներ»

	<p>216 «Ապրանքներ» 712 «Իրացման ծախսեր» 713 «Վարչական ծախսեր» 811 «Հիմնական արտադրություն» 812 «Օժանդակ արտադրություն» 813 «Անուղղակի արտադրական ծախսումներ» 821 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների կառուցման (ստեղծման) ծախսումներ» 822 «Սարքավորումների տեղակայման ծախսումներ» 823 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումներ» 826 «Այլ ոչ ընթացիկ ակտիվների ստեղծման ծախսումներ»</p>
գ) գնորդներից հետ վերադարձված արտադրանքի, ապրանքների դիմաց	<p>612 «Իրացված արտադրանքի, ապրանքների հետ վերադարձումից հասույթի ճշգրտում» 226 «Հաշվանցման (փոխհատուցման) ենթակա անուղղակի հարկեր»</p>
դ) կատարողական թերթիկներով	527 «Պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով»
2. Հաշվարկված տույժերի ու տուգանքների արտացոլում	714 «Գործառնական այլ ծախսեր»
3. Հետ գնված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) վճարման դիմաց պարտավորության արտացոլում (գնման գնով)	313 «Հետ գնված կապիտալ»
4. Ձեռնարկատիրական գործունեության ձեռք բերման դիմաց վճարվելիք գումարների արտացոլում	156 «Ձեռնարկատիրական գործունեության ձեռքբերում»
5. Ֆինանսական վարձակալության գծով երկարաժամկետ պարտքերի ժամկետից շուտ մարման դեպքում վճարվելիք գումարների արտացոլում	<p>413 «Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարներ» 515 «Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս»</p>
6. Արտարժույթով արտահայտված վճարումների գծով փոխարժեքային տարբերություններից՝ կորստի արտացոլում	725 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից կորուստներ»

531 «Այլ ընթացիկ պարտավորություններ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Այլ ընթացիկ պարտավորությունների մարում	<p>251 «Դրամարկղ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 224 «Տրված ընթացիկ կանխավճարներ»</p>
2. Ֆիզիկական անձ մատակարարներից պահվող եկամտահարկի կամ ոչ ռեզիդենտ մատակարարներից պահվող շահութահարկի գումարների արտացոլում	542 «Վճարումն հետաձգված հարկային պարտավորություններ»
3. Արտարժույթով արտահայտված վճարումների գծով փոխարժեքային տարբերություններից օգուտի արտացոլում	625 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտներ»

ԽՈՒՄԲ 54 «ԱՅԼ ԸՆԹԱՑԻԿ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

54 «Այլ ընթացիկ պարտավորություններ» խումբը իր մեջ ներառում է հետևյալ առաջին կարգի (սինթետիկ) հաշիվները՝ 541 «Եկամուտներին վերաբերող շնորհներ», 542 «Վճարումն հետաձգված հարկային պարտավորություններ», 543 «Ընթացիկ պահուստներ», 544 «Պատվիրատուներին հասանելիք համախառն գումարներ կառուցման պայմանագրերի գծով»:

Հաշիվ 541 «Եկամուտներին վերաբերող շնորհներ»

541 «Եկամուտներին վերաբերող շնորհներ» հաշիվը նախատեսված է եկամուտներին վերաբերող շնորհների (շնորհներ, որոնք չեն հանդիսանում ակտիվներին վերաբերող շնորհներ) վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Եկամուտներին վերաբերող շնորհների հաշվապահական հաշվառման մոտեցումները նկարագրված են «Պետական շնորհների հաշվառում և պետական օգնության բացահայտում» ՀՀՄՍ 20-ում:

Հաշիվը պասիվային է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում է եկամուտներին վերաբերող շնորհների գումարը, իսկ դեբետում՝ դրանց վերագրումը հաշվետու ժամանակաշրջանի եկամուտներին: Այս հաշվի մնացորդը կրեդիտային է և իրենից ներկայացնում է դեռևս եկամուտ չճանաչված եկամուտներին վերաբերող շնորհների գումարը հաշվետու ամսաթվի դրությամբ:

Եկամուտներին վերաբերող շնորհների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ դրանց առաջացման ուղղությունների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

541 «Եկամուտներին վերաբերող շնորհներ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
Եկամուտներին վերաբերող շնորհների ստացում	211 «Նյութեր» 212 «Սպառվող կենսաբանական ակտիվներ» 216 «Ապրանքներ» 251 «Դրամարկղ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում»

541 «Եկամուտներին վերաբերող շնորհներ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Եկամուտներին վերաբերող շնորհների վերագրումը հաշվետու ժամանակաշրջանի եկամուտներին	628 «Շնորհներից և անհատույց ստացումներից եկամուտներ»
2. Շնորհների վերադարձում՝ չմարված (դեռևս եկամուտ չճանաչված) մնացորդի հաշվին	211 «Նյութեր» 212 «Սպառվող կենսաբանական ակտիվներ» 216 «Ապրանքներ» 251 «Դրամարկղ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում»

Հաշիվ 542 «Վճարումն հետաձգված հարկային պարտավորություններ»

542 «Վճարումն հետաձգված հարկային պարտավորություններ» հաշիվը նախատեսված է այն հաշվարկված հարկերի գծով պարտավորությունների առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության

ընդհանրացման համար, որոնց վճարման ժամկետը, հարկային օրենսդրության համաձայն, հետաձգվում է, սովորաբար, մինչև դրանց հետ կապված վճարումների փաստացի կատարումը կամ ստացումը, օրինակ, կազմակերպության՝ որպես հարկային գործակալի կողմից վարձակալության կամ գնումների դիմաց քաղաքացիներին վճարվելիք գումարից պահվող եկամտահարկը, կամ ջրային ընկերությունների կողմից վճարվելիք ավելացված արժեքի հարկը և շահութահարկը:

Հաշիվը պասիվային է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում է վճարումն հետաձգված հարկային պարտավորությունների գումարը, իսկ դեբետում՝ դրանց փոխանցումը հարկերի գծով պարտքերի հաշվին: Այս հաշվի մնացորդը կրեդիտային է և իրենից ներկայացնում է հետաձգված հարկերի գծով ընթացիկ պարտավորությունների գումարը հաշվետու ամսաթվի դրությամբ:

Վճարումն հետաձգված հարկային պարտավորությունների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ հարկերի և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

542 «Վճարումն հետաձգված հարկային պարտավորություններ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Իրացված արտադրանքի, ապրանքների, մատուցված ծառայությունների, կատարված աշխատանքների գծով հարկային հաշիվներում առկա ԱԱՀ-ի գումարների արտացոլում, երբ իրացման և հարկային պարտավորությունների առաջացման պահերը չեն համընկնում	221 «Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով» 222 «Դեբիտորական պարտքեր այլ եկամուտների գծով»
2. Իրացված արտադրանքի, ապրանքների, մատուցված ծառայությունների, կատարված աշխատանքների գծով շահութահարկի գումարների արտացոլում, երբ հարկի վճարման ժամկետը հետաձգվել է մինչև իրացման դիմաց վճարի ստացման ժամանակաշրջանը	751 «Շահութահարկի գծով ծախս (եկամուտ)»
3. Ֆիզիկական անձ մատակարարներից պահվող եկամտահարկի կամ ոչ ռեզիդենտ մատակարարներից պահվող շահութահարկի գումարների արտացոլում	521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով» 531 «Այլ ընթացիկ պարտավորություններ»

542 «Վճարումը հետաձգված հարկային պարտավորություններ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
Վճարումը հետաձգված հարկային պարտավորությունների տեղափոխումը հարկերի գծով պարտքի հաշիվ	524 «Պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով»

Հաշիվ 543 «Ընթացիկ պահուստներ»

543 «Ընթացիկ պահուստներ» հաշիվը նախատեսված է որպես պարտավորություն ճանաչվող ընթացիկ պահուստների առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Ընթացիկ պահուստների ճանաչման, չափման և օգտագործման մոտեցումները նկարագրված են «Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ» ՀՀՄՍ 37-ում:

Հաշիվը պասիվային է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում է ճանաչված ընթացիկ պահուստների գումարը, ոչ ընթացիկ պահուստների ընթացիկ մասը, իսկ դեբետում՝ դրանց օգտագործումը: Այս

հաշվի մնացորդը կրեդիտային է և իրենից ներկայացնում է ընթացիկ պահուստների մնացորդը հաշվետու ամսաթվի դրությամբ:

543 «Ընթացիկ պահուստներ» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 5431 «Երաշխիքային վաճառքների գծով ընթացիկ պահուստներ», 5432 «Անբարենպաստ պայմանագրերի գծով ընթացիկ պահուստներ», 5433 «Տրամադրված երաշխավորությունների և երաշխիքների գծով ընթացիկ պահուստներ», 5434 «Ոչ ընթացիկ պահուստների ընթացիկ մաս», 5435 «Վաստակած արձակուրդայինի գծով պահուստ» :

Ընթացիկ պահուստների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ առանձին պահուստների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

543 «Ընթացիկ պահուստներ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Ընթացիկ պահուստների ճանաչում	714 «Գործառնական այլ ծախսեր»
2. Ոչ ընթացիկ պահուստների ընթացիկ մասի տեղափոխում	425 «Ոչ ընթացիկ պահուստներ»
3. Ոչ ընթացիկ պահուստների ընթացիկ մասի գծով զեղչման ազդեցության ճշգրտման (զեղչի հետպտույտի) հետևանքով տոկոսային ծախսի արտացոլում	727 «Ֆինանսական ծախսեր»

543 «Ընթացիկ պահուստներ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
Ընթացիկ պահուստների օգտագործում	112 «Հիմնական միջոցների մաշվածություն» 121 «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների մաշվածություն» 132 «Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա» 211 «Նյութեր» 215 «Արտադրանք» 216 «Ապրանքներ» 251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում» 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով» 525 «Պարտքեր պարտադիր սոցիալական ապահովության գծով» 527 «Պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով» 531 «Այլ ընթացիկ պարտավորություններ» 812 «Օժանդակ արտադրություն»

Հաշիվ 544 «Պատվիրատուներին հասանելիք համախառն գումարներ կառուցման պայմանագրերի գծով»

544 «Պատվիրատուներին հասանելիք համախառն գումարներ կառուցման պայմանագրերի գծով» հաշիվը նախատեսված է կապալառուների մոտ, «Կառուցման պայմանագրեր» ՀՀՄՍ 11-ին համապատասխան, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես պարտավորություն ճանաչման ենթակա

«Պատվիրատուներին հասանելիք համախառն գումարների» վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Պայմանագրի աշխատանքների դիմաց պատվիրատուներին հասանելիք համախառն գումարն իրենից ներկայացնում է հաշվետու ամսաթվի դրությամբ, կուտակային հիմունքով, կրած (կատարված) ծախսումներ, գումարած՝ ճանաչված շահույթները, հանած՝ ճանաչված վնասներ և հանած՝ միջանկյալ հաշիվների գումարը, երբ զուտ հանրագումարը բացասական թիվ է:

Հաշիվը պասիվային է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում է պայմանագրերի ներքո կատարված աշխատանքների գծով ներկայացված միջանկյալ հաշիվների (հաշիվ ապրանքագրերի) գումարը՝ այդ աշխատանքների գծով ճանաչված հասույթը գերազանցող մասով, իսկ դեբետում՝ այդ գումարների հասույթ ճանաչումը: Այս հաշվի մնացորդը կրեդիտային է և իրենից ներկայացնում է պայմանագրային աշխատանքների գծով պատվիրատուներին հասանելիք համախառն գումարները (որպես պարտավորություն) հաշվետու ամսաթվի դրությամբ:

Կառուցման պայմանագրերի գծով պատվիրատուներին հասանելիք համախառն գումարների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ պայմանագրերի և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

544 «Պատվիրատուներին հասանելիք համախառն գումարներ կառուցման պայմանագրերի գծով» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Կառուցման պայմանագրերի ներքո կատարված աշխատանքների գծով ներկայացված հաշիվներ (հաշիվ ապրանքագրեր) ճանաչված հասույթ՝ գումարը գերազանցող չափով	221 «Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով»
2. Կառուցման պայմանագրերի գծով ծախսի ճանաչում կատարված ծախսումները գերազանցող չափով	711 «Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք»

544 «Պատվիրատուներից ստացվելիք համախառն գումարներ կառուցման պայմանագրերի գծով» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Կառուցման պայմանագրերի ներքո նախապես ներկայացված հաշվի (հաշիվ ապրանքագրի) գծով հասույթի ճանաչում	611 «Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ»
2. Կառուցման պայմանագրերի ներքո հաշվետու ժամանակաշրջանում կատարված ծախսումներ, որոնց գծով ծախս է ճանաչվել նախկինում	811 «Հիմնական արտադրություն»